25-31 ՕԳՈՍՏՈՍ 2023 ՈՒՐԲԱԹ 30(5765)

# Ազգ

Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

9 771829 165003 23029

## «Աշխարհը սեփական շահերին ի գին թողնում է, որ հայերը սովի մատնվեն»

Օգոստոսի 24-ին գերմանական «Թագեսշպիգելում» հրապարակվել է **Թեսսա Հոֆմանի** ծավալուն հոդվածը. «ԼՂ-ին ցեղասպանությո՞ւն է սպառնում. Աշխարհը սեփական շահերին ի գին թողնում է, որ հայերը սովի մատնվեն» վերնագրով: Հեղինակը մանրամասն շարադրում է ԼՂ հարցի բուն էությունը, Արցախի շրջափակման Ալիեւի նպատակների մասին: Ավստրիական ORF-ի եթերում օգոստոսի 22-ին Արցախում տիրող իրավիճակի, արցախահայերի ծանր վիճակի մասին տագնապ է հնչեցրել **Յասմին Դում- Թրագութը**: Իսկ օգոստոսի 23-ին «Ցեղասպանության ճանաչման հանձնախումբը, «Վտանգված ազգերի ընկերակցությունը», բազմաթիվ գերմանահայեր Բեռլինում, կանցլերի գրասենյակի առջեւ հսկում են անցկացրել՝ կոչ ուղղելով **Օլաֆ Շոլցին**՝ կանխելու Արցախին սպառնացող ցեղասպանությունը:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Անպատասխան հոխորտանքներ

### *Ինչո՞ւ են լռում մեր պատմաբաններն ու մյուս մասնագետները*

Ի տես Իլհամ Ալիեւի հոխորտալից կեցվածքին, հանդիպումների եւ ընդունելությունների ժամանակ նրա սիգաճե՜մ շարժուձեւին, տեսախցիկների դիմաց ոտնաչռած նստվածքին ու մանավանդ զինվորական կամուֆլյաժը հագին Շուշիով եւ բռնագրավված մեր մյուս բնակավայրերով տիկնոջ թաթիկը բռնած՝ տիրական ճալկվածքին,- բոլորն էլ հասցեագրված մեզ՝ հայերիս, մի ճիչ էլ իր հպատակներին,- կան նաեւ ճահճահ ծիծաղողներ նույնիսկ Թուրքիայում: Դրանցից առաջինը եթե նախագահ Էրդողանն է, ապա, վստահ եմ, պակաս չեն զվարճանում նաեւ պաշտպանության նախարար Ուլուսու Աքարը եւ սպայակույտի մյուս անդամները: Այսինքն այն մարդիկ, որոնք նրանից՝ Իլհամից ավելի լավ, մասնագիտորեն գիտեն 44-օրյա պատերազմին իրենց տարած հաղթանակի մանրամասները: Օղլանը (տղան) թող հոխորտա, միևնույն երեւի ասում են թուրք բարձրաստիճանավորները, որոնք ստեպ-ստեպ, ներառյալ Էրդողանը, ինչպես վկայում են թուրք լրագրողները, կլորիկ գումարներ են ստանում նրանից, ամեն մի այցելությունից: Զենքն ու զինվորը իրենից՝ պատերազմելու վարպետությունը՝ մեզանից, ասում են նրանք, քաջ գիտենալով, որ հայկական տարածքների հետ Ադրբեջանն էլ ի վերջո իրենցն է լինելու, կամ արդեն իսկ է, որպես թուրանականության անցուղի եւ տարածք:

Եվ այդ հոխորտանքի դեմ, Արցախի հետ ամբողջ Հայաստանն էլ «բիզիմ դիր» անող ալիեւյան քաղաքականության դեմ, թուրքական հոգեճնշման դեմ ոչ մեկ պատասխան հայկական կողմից, չհաշված հատուկենտ փորձագետները, որոնք ջանում են արձագանքել ընդամենը առօրյա զարգացումներին: Մեր գիտնականներից ոչ ոք ըմբերանիչ պատասխան, պատմագիտական, աշխարհագրագիտական կամ ազգագրագիտական հակահարված չի տալիս Ալիեւին ու նրա համախոհներին:

Բոլորս գիտենք, որ հակաքաղաքականության հարցում մեր գործող իշխանությունները «պաղանձնումն Զաքարիայի» օրինակին են հետեւում, գլխավորությամբ վարչապետի, որ հակառակ իր շատախոսասիրությանը, կարծես երդում է տվել, կամ ինչ-որ ստիպողության տակ է գտնվում անձամբ Ալիեւի եւ ուրիշների կողմից, նաեւ պարտավորության տակ՝ երազային ինչ-որ խաղաղությունից բարբառելու: Մինչդեռ աղավնիներ մեզ պետք չեն, ո՛չ էլ ներսում անընդհատ կռկռացող ագռավներ, այլ՝ սրատես արագաթռիչ բազեներ:

Սակայն քննադատությանս թիրախը մեր տիտղոսավոր մասնագետներն են, առաջին հերթին՝ պատմաբանները, աշխարհագրության մասնագետները, ազգագրագետները, հասարակագետները, նաեւ տնտեսագետները, որոնք կարող էին սպառիչ պատասխան տալ, նախընտրաբար օտարալեզու մամուլում, ալիեւյան ծավալապաշտությանը, պատմական-տարածքային կեղծիքներին: Այնպես՝ ինչպես, նույնիսկ սովետական շրջանում, մեր արթուն պահակ Բագրատ Ուլուբաբյանի, Զորի Բալայանի, Պարույր Սեւակի նման մտավորականները՝ տիտղոս, աշխատանք, անգամ կյանք կորցնելու գնով:

Ո՞վ է լռողը, ո՞վ է բանի տեղ դնողը, պիտի ասեն ընթերցողներիցս ոմանք:

Առաջին հերթին մե՛զ է պետք, մեր ժողովրդին, որ իսկապես «դուխից» ընկած վիճակում է գտնվում թուրքական հզոր կոալիցիայից պարտվելուց հետո: Պետք է բարձրացնել ժողովրդի ոգին, դիմանալու, դիմադրելու, դժբախտությունները հաղթահարելու ցանկությունը: Ո՛չ օդային, աբոխավարական խոսքերով, այլ փաստական մեծաքանակ նյութերով, որոնք կան հայ եւ օտարալեզու գրքերում, արխիվներում ու մամուլում: Պարզապես պետք է քաղել, համադրել ու հրապարակել դրանք, սկսելով Ռուսական կայսրության Բաքվի նահանգի հայաշատ շրջանների՝ Շամախի, Շամխորի, Գանձակի, Դերբենդի եւ նույնիսկ Բաքու քաղաքի փաստական վիճակագրությունը, ազգագրական խտությունը, պատմական հուշարձանների, կրթական, մշակութային, եկեղեցական հաստատությունների, առեւտրատնտեսական կենտրոնների մասին նյութերի մատուցումից: Եվ դա պետք է անել անդադար՝ յուրաքանչյուր «բիզիմ դիր»-ին ի պատասխան, կամ կանխելով դրանք:

Կոչումներն ու տիտղոսները ոչինչ արժեն, եթե դրանք չեն ծառայում ժողովրդին, հայրենիքին, ճշմարտությանը:

Սա՛ էլ ռազմաճակատ է: Պատերազմը շարունակվում է:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Սխեմա գծողներից առաջ ընկնողներ են պետք

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Թե մեր ինչին էր պետք ՄԱԿ Անվտանգության խորհրդի վերջին քննարկումը, որտեղ Ադրբեջանին ուղղված հորդոր, բանաձեւ, հայտարարություն չընդունվեց, մնում է մութ: Թե ինչու էր պետք սպասում առաջացնել




ՄԱԿ-ի քննարկումից՝ դա էլ է անհասկանալի: Ավելի շուտ՝ մեր ենթադրությունն է իրականությանը մոտ՝ քննարկումը նախագծվել էր հայերիս հասկացնելու, որ ձեռք քաշենք Արցախն Ադրբեջանի կազմում չպատկերացնելուց: Այդպիսով՝ համարյա ողջ միջազգային հանրություն կոչվածը խրախուսեց Ադրբեջանին անել այն, ինչ անում է, իսկ վարչապետ **Փաշինյանի** ասածը կառավարության վերջին նիստին, թե հավաստի տեղեկություններ կան, որ Լաչինի միջանցքը բացելու միակողմանի ծրագրեր կան (դեպի Հայաստան) հենց հաստատումն է նրա, որ միջազգային հանրության երեսպաշտ հայացքի ներքո Արցախը հայաթափելու ծրագիր է իրականացվում, հավանաբար բոլորին պետք է Արցախը՝ որպես տարբեր տարածաշրջանային ծրագրերի իրացման մեկնարկային տարածք, իսկ դրան հայերը խանգարում են:

⇨3

## Բեռլինից անկալում ենք Ստեփանակերտի հետ օդային կամրջի հարցը լուծել

### *Եւ պահանջում, որ Գերմանիայի կառավարության խոսնակը ներողություն խնդրի*

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ


Շտեֆֆեն Հեբեշթրայթ

Օգոստոսի 21-ին առցանց «**Ազգ**»ում «Գերմանիայի կառավարության խոսնակ Հեբեշթրայթը գերազանցում է բարոյազրկման սահմանը» վերնագրյալ համառոտ տեղեկատվության մեջ ծանուցել էինք, որ ի պատասխան լրագրող **Ջեննի Գյունթերի** (Jenny Günther) հարցին, կառավարության խոսնակների ասուլիսի ժամանակ Գերմանիայի դաշնային կառավարության խոսնակ **Շտեֆֆեն Հեբեշթրայթը** (Steffen Hebestreit) կարծիք էր հայտնել, թե ՄԱԿ-ի արդարադատության միջազգային դատարանի նախկին գլխավոր դատախազ **Մորենո Օքամփոյի**՝ ԼՂ-ում 120 000 հայերին Ադրբեջանի սովի մատնելը «ցեղասպանություն» դասակարգելը «քաղաքականություն» է (պրոպագանդա): Խոսնակը գործածել էր նաեւ Kampfbegriff բառը, որ հայերեն բացատրությամբ նշանակում է՝ մարտական (մարտավարական) հասկացություն: Ասել է, թե սա զգացական բառ է, որ նպատակ ունի հրահրել հակառակորդին, ստիպել ընդունել սեփական տեսակետը:

Ջեննի Գյունթերի հարցի մասին չէինք գրել: Մեր կարծիքով, դաշնային կառավարության խոսնակի ցինիզմը նկարագրելու համար մանրամասնենք՝ ինչպե՞ս եղավ: Հարցի սկզբում Գյունթերը հիշատակեց, թե դաշնային կառավարությունը ի դեմս ԳԴՀ ԱԳՆ-ի մտահոգություն էր հայտնել, ինչը լավ է, սակայն Պուտինի, Ռուսաստանի պարագայում հստակ եւ արագ է եղել արձագանքը՝ դատապարտում եւ պատժամիջոցներ, «իսկ հիմա, ընդգծեց լրագրողը, խոսքը ԼՂ 120 000 հայերին սպառնացող ցեղասպանության մասին է՝ սովի մատնելու միջոցով, որոնց թվում 30 000 երեխաներ են»:

⇨4

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Երկիր մոլորակը դէպի ո՞ւր

Ամերիկեան Միացեալ Նահանգները, որ աշխարհին կը ներկայանայ իր «Free Country» (Ազատ երկիր) ըլլալու լոզունգով, իր բազմաթիւ ազատութիւններուն վրայ եկաւ աւելցնելու եւս մէկը՝ սեռափոխումը, «Trance gender»... Այսինքն մարդ կրնայ իր սեռը փոխել, այսինքն կին մը կրնայ տղամարդ դառնալ, կամ տղամարդ մը՝ կին: Եթէ նախապէս հասուկենտ դէմքեր եղած են, երբեմն ստիպուած, երբ ի ծնէ խախտած են ենթակային սեռական հակումները, որ անձը առաջնորդած է միասեռականութեան, կամ ալ պարզապէս միւս սեռին մէջ առաւելութիւններ նկատած է ու դիմած սեռափոխութեան, այսօր ամերիկեան պետութիւնը պաշտօնապէս կը ծրագրէ սեռափոխութիւնը արտօնել, մասնաւորապէս արբունքի տարիքին, առանց իսկ ծնողքին գիտակցութեան կամ արտօնութեան:



Եթէ ոչ բոլորը, գոնէ ամերիկեան ֆիլմերու ջախջախիչ մեծամասնութեան մէջ կրկնուող անընդունելի ճանչցուած երեւոյթները ընդունելի դարձնելու յատուկ ճիգեր կան, որոնք պատահական չեն իմ կարծիքով, այլ յատուկ նպատակադրուած, նպատակաուղղուածութիւն ունին, ինչպէս թմրանիւթերու օգտագործումը, միասեռականութիւնը, նախամուսնական սեռական յարաբերութիւնները ու քաջալերումը, հայհոյալից խօսակցական ոճերը, բաժան-բաժան եղած ընտանիքները... իսկ այսօր ալ՝ սեռափոխումը:

Ազատութիւն ըսուածը երկսայրի սուր մըն է, կրնայ ենթակային օգտակար դառնալ, կրնայ նաեւ անոր վնասել, ըստ անոր օգտագործման պարագաներուն:

Վերեւը յիշուածներուն վրայ կարելի է ուրիշներ ալ աւելցնել, սակայն կ՛ուզեմ կեդրոնանալ սեռափոխութեան հարցին վրայ:

Բոլորս ալ գիտենք, որ բնութեան մէջ ամէն ինչ այնքան հաւասարակշռուած է, որ որեւէ լուրջ խախտում կրնայ վտանգալից հետեւանքներ ունենալ: Ամբողջ տիեզերքը, այն՝ ինչ որ հասանելի է մարդկութեան, հիմնուած է հաւասարակշռութեան վրայ: Արարիչը՝ Աստուած կոչենք մենք թէ ուրիշներ՝ Ալլահ, կամ Եհովա, կամ չգիտեմ այլ անուններով, այնքան ճշգրիտ ձեւով ստեղծած է բնութիւնը, աստղաբոյլերը, մոլորակներն ու արբանեակները, տարուան իրերայաջորդ չորս եղանակները, մարդը, բոյսն ու անասունը, անոնց շարունակականութիւնն ապահովող սերնդագործումը, տակաւին իւրաքանչիւրին սնանելու, ապրելու եւ մեռնելու ժամանակներն ու եղանակները, որոնք, հակառակ յառաջընթաց գիտութեան, ցարդ շատ կողմերով կը մնան անբացատրելի:

Վերադառնալով սեռին եւ սեռափոխութեան հարցին, կեանքի շարունակականութեան ապահովման ի խնդիր, այր ու կին կենակցելով է որ կը լուծեն այդ հարցը: Ատոր համար մարդը օժտուած է բեղմնաւորողի անհրաժեշտ միջոցներով, իսկ կինը՝ բեղմնաւորուելու եւ պտղաբերումի անհրաժեշտ միջոցներով, եւ արդիւնքը՝ նոր մարդու մը արարումն է:

Հիմա, երբ կը փորձեն տղամարդը կին դարձնել եւ հակառակը, լուրջ խախտում մը տեղի կ՛ունենայ ընդհանուր համակարգին մէջ: Նախ՝ անկարելի է հարիւր առ հարիւր սեռը փոխել, սեռային գործարանները կարելի է փոխել, սակայն անոնք բաւարար չեն, քանի անոնց հետ կարելի չէ զգացական աշխարհն ալ փոխել, կարելի չէ հոգեկան աշխարհն ալ փոխանցել... Հապա՞ ուղեղը, ո՞վ կրնայ ուղեղին դպչիլ: Այնպէս որ, սեռափոխում ըսուածը սահմանափակ փոփոխութեանց իրավիճակ մըն է, որուն հետեւանքը կրնայ բարի չըլլալ:

Յառաջացած տարիքի մարդիկ շատ աւելի լաւ կը տեսնեն ու կը զգան աշխարհի վիճակն այսօր, բաղդատած անցեալին: Բարոյականութեան նահանջը այնքան զգալի է մեր պարագային, երբ բաներ կը տեսնենք ու կ՛ապշինք, կ՛ընդվզինք, կը դատապարտենք, երբ նոր սերունդին համար այդ բոլոր ընդվզեցուցիչ վիճակները արդէն սովորական դարձած են եւ նոյնիսկ՝ ընդունելի ու կիրառելի, պարզապէս սրարշաւ «նորարարութիւններէն» ետ չմնալու համար: Տեղ մը շատ, տեղ մը քիչ, բայց ընդհանուր խախտում մը կայ, որ երթալով այնքան նստուածք կու տայ, որ սրբագրելն ու փոխելը անհնար կը դառնայ:

Արարիչը հրաշալի նուէր մը տուած է մարդկութեան, իսկ մարդիկ անտեսելով այդ հրաշքը, սկսած են զայն չարաչար գործածել, ճիշդ մանուկի մը պէս, որ իրեն տրուած խաղալիքը այնքան անհոգութեամբ կը գործածէ, որ շրջան մը ետք ջարդօնի կը վերածուի: Մեղք է մարդկութիւնը, այս երկնառաք կեանքին հետ քմահաճօրէն մի՛ վարուիք, թէ չէ ո՞վ կրնայ ըսել, թէ մեր երկրագունդը դէպի ո՞ւր կը գլորի:

# Իրան-ԱՄՆ երկխոսության հուսադրող հեռանկարներ

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

**Իրանում ՀՀ նախկին դեսպան**

Թեհրանի ու Վաշինգտոնի միջեւ կայացած եւ կայանալիք դիվանագիտական շփումներն այլեւս անհերքելի իրողություններ են:

Երկկողմ շփումների համար նոր առիթ կարող է հանդիսանալ սեպտեմբերի 11-15-ը Իրանի միջուկային ծրագրի շուրջ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) Կառավարիչների խորհրդի կայանալիք նիստը:

Երկկողմ շփումների հաջորդ հանգրվանն ու հարթակը կարող է լինել սեպտեմբերի 19-ին սպասվող ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 77-րդ նստաշրջանը, որին նախատեսվում է ԻԻՀ նախագահ **Ռայիսիի** մասնակցությունը:

ՄԱԿ-ում Իրանի մշտական ներկայացուցչի խոսքերը վկայաբերելով, իրանական «ԻՌՆԱ» գործակալությունը գրեց. «Բանտարկյալներին ներում շնորհելու գործընթացը տեղի է ունենում երրորդ երկրի միջնորդությամբ ձեռք բերված պայմանավորվածության շրջանակներում: Իսկ Իրանի ԱԳՆ տարածած հաղորդագրության մեջ նշված է, որ բանտարկյալների փոխանակման համար տեղի ունեցող նախապատրաստական աշխատանքներին զուգընթաց, Հարավային Կորեայում շարունակվում է Իրանին պատկանող ակտիվների ապասառեցմանն ու դրանց տնօրինման հարցում կիրառվող սահմանափակումների վերացմանն ուղղված գործընթացը:



Թեհրանի ու Վաշինգտոնի միջեւ երկխոսությունը չի շրջանցում նաեւ մշակութային ոլորտը: Տեղեկություններ կան, որ Իրանի մշակույթի ու իսլամական առաջնորդության նախարարության ու ԱՄՆ համապատասխան գերատեսչությունների ջանքերի շնորհիվ, առաջիկա ամիսներին մեծ թվով պատմամշակութային ցուցանմուշներ են ԱՄՆ-ից տեղափոխվելու Իրան: Խոսքը հավանաբար վերաբերում է նաեւ Պերսեպոլիսի պեղումներից հայտնաբերված աքեմենյան շրջանի ոսկե հուշամասյաններին:

Մշակութային ոլորտից զատ, առայժմ, որպես արձանագրված փաստ, կարելի է խոսել Իրանի ու ԱՄՆ-ի միջեւ բանտարկյալների փոխանակման շուրջ ձեռք բերված պայմանավորվածություններին: «Ռոյթըրզ»-ի փոխանցմամբ, Սպիտակ տան անվտանգության գծով խորհրդական **Ջեք Սալիվանն** օգոստոսի 22-ի մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարվել է, որ ըստ կողմերի միջեւ ձեռք բերված պայմանավորվածության, գործընթացը հաջողությամբ առաջ է գնում: Նա նշել է, որ շարունակվում են այդ ուղղությամբ անհրաժեշտ քայլեր ձեռնարկվել, սակայն ափսոսանք է հայտնել, որ չի կարող ԱՄՆ քաղաքացիների Իրանից վերադառնալու ճշգրիտ ժամկետների մասին տեղեկատվություն տրամադրել:

Այլեւս գաղտնիք չէ, որ ԻԻՀ եւ ԱՄՆ կառավարությունները Վաշինգտոնի կողմից իրանական ակտիվների մի մասի ապասառեցման եւ երկու երկրների միջեւ բանտարկյալների փոխանակման հարցի շուրջ երկու տարի առաջ Քաթարի ու Օմանի միջնորդությամբ անուղղակի ու գաղտնի բանակցություններ էին սկսվել: Օգոստոսի 10-ին ԱՄՆ որոշ լրատվամիջոցների կողմից հինգ բանտարկյալի ազատ արձակման մասին տեղեկատվության հրապարակումից հետո, երկու երկրների պաշտոնական ներկայացուցիչները հաստատեցին այդ լուրը:

Տվյալ պայմանավորվածության համաձայն, վերանայվել է Թեհրանի «Էվին» բանտում պատժաժամկետն անցկացնող հինգ քաղաքացիների խափանման միջոցը, եւ նշված երկքաղաքացիություն ունեցող անձինք ներկայումս հյուրանոցային պայմաններում գտնվում են հատուկ հսկողության տակ:

Վաշինգտոնի կողմից իրանական ակտիվների մի մասի ապասառեցման եւ երկու երկրների միջեւ բանտարկյալների փոխանակման հարցի վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունները թե՛ ԱՄՆ-ում, եւ թե՛ Իրանում արժանացել են նաեւ բացասական արձագանքների: ԱՄՆ նախկին նախագահի տեղակալ **Մայք Փենսը,** քննադատելով ԱՄՆ նախագահ **Բայդենի** կառավարությանը՝ այդ պայմանավորվածությունն անվանել է ԱՄՆ պատմության ամենախոշոր «ռեկետը»: Նրա խոսքերով, ապասառեցված գումարներն Իրանի կողմից օգտագործվելու են Ռուսաստանի կարիքների համար ԱԹՍ-ներ արտադրելու նպատակով:

ԱՄՆ Արքանզասից ընտրված հանրապետական սենատոր **Թոմ Քոթթոնն** էլ նշել է. «Թեեւ մենք ամերիկացի պատանդների ազատ արձակման հարցի ջատագովներն ենք, սակայն անընդունելի ենք համարում գումարի դիմաց մեր հինգ քաղաքացիների ազատ արձակելը, քանի որ այն այաթոլլահներին կխրախուսի ավելի մեծ ծավալով զբաղվել պատանդառությամբ»:

Իսկ Իրանի նախորդ գումարման մեջլիսի բարեփոխական պատգամավոր **Մահմուդ Սադեղին** իր թվիթերյան էջում այդ գործարքն ստորացուցիչ պայմանավորվածություն է անվանել եւ հավելել. «Քանի որ Իրանը չի ընդունում երկքաղաքացիությունը, այդ դեպքում հարց է ծագում՝ ԻԻՀ քաղաքացիների ազատ արձակելը ի՞նչ կապ ունի ԱՄՆ-ի հետ»:

Այնուամենայնիվ, գործընթացի վերաբերյալ հնչող թեր եւ դեմ կարծիքներով հանդերձ, մեր փոթորկահույզ աշխարհում Թեհրանի ու Վաշինգտոնի միջեւ թեկուզ խորհրդանշական արդյունքներով մեկնարկած երկխոսությունը հուսադրող ու ողջունելի է:

# Սխեմա գծողներից առաջ ընկնողներ են պետք

⇨1 Մնում է հասկանալ՝ Հայաստանի ղեկավարությունը դրան մասնակի՞ց է, թե՞ առանց նրա են դա մտածել ու չուրախանալ այնպիսի անկապ բաներից, թե ՝ սկանդալ է, **Ալիեւը** չի ընդունում Բելգիայի հայամետ արտգործնախարարին:

Տարօրինակ գործընթացներ են նաեւ Արցախի ղեկավարության շրջանում՝ գաղտնի հավաքներ, ինչ-որ աշխարհազորայինների վերջնագրեր, Արցախի ԱԺ նոր, դաշնակցական նախագահ, որը հավակնություն ունի ղեկավարել Արցախը, երբ **Արայիկ Հարությունյանը** հրաժարական տա: Վերջինս էլ մեկ ասում է՝ «Հրաժարական եմ տալիս», մեկ՝ «Չեմ տալիս» , նայած ինչ վերպետական ուժեր են հրում այդ պահին նրան, ու այսպես: Խոսվում է, որ Ակնայի (Աղդամի) ճանապարհը բացելու, Բարդայում ադրբեջանցիների հետ հանդիպելու, իրավիճակի վերաբերյալ քննարկումներ անելու թեմա կա, դրա կողմնակիցը Արցախի նախագահն ու **Սամվել Բաբայանն** են, իսկ ԱԺ նոր նախագահ **Դավիթ Իշխանյանն** ու նրա կողմնակիցներն ավելի արմատական են, ու այս իմաստով ներքին բախում կա: Երրորդ կողմ էլ կա՝ **Ռուբեն Վարդանյանը**, որը եւս ակնարկներով է խոսում, տարակուսում, որ Արայիկ Հարությունյանն ի վերջո հրաժարական չի տալիս՝ մյուս երկու կողմերի թերասացությունների ընդհանուր տոնը պահելով: Ի վերջո անհասկանալի է՝ ո՞վ ի՞նչ է ուզում անել, ո՞վ՝ ո՞ւմ է վերջնագիր ներկայացնում, ի՞նչ եւ ո՞վ կա այդ բոլորի տակ, եւ գլխավոր խնդրո՞ւմ է միայն հակասությունը, այն է՝ Ակնայի ճանապարհով Ադրբեջանից ելումուտ թույլատրել-չթույլատրե՞լը, թե՞ նաեւ սովամահության իրական վտանգի առկայությամբ՝ աշխարհաքաղաքական ենթատեքստերով բախումն է իրական, քանի որ տարածքում շահեր ունեցող մեծ պետություններից յուրաքանչյուրն, անշուշտ, իր մարդկանցով է լցնել Արցախի ղեկին մոտ կանգնած մարդկանց շրջանակը: Ստացվում է՝ թքած արցախցիների էլ, Արցախի ապագա ճակատագրի վրա էլ, բախումը աշխարհաքաղաքական է, հա՞:

Եվ Հայաստանի, նրա ղեկավարության պահվածքն էլ ոչ մի արդարացում չունի եւ կմտնի հայոց պատմության դասագրքեր հետագայում որպես ամենաթույլ, արտաքին ազդեցություններից կախվածի մասին պատմություն, եթե, իհարկե, Արցախ մնա, անկախ Հայաստան մնա, որովհետեւ Արցախը հանձնելով Ադրբեջանին՝ վտանգ ենք ստեղծելու հենց Հայաստանի տարածքային ամբողջականության պահպանման, ապագայի, պետականության եւ անվտանգության տեսակետից:

Հոգնեցինք այս բոլորը գրելով, Հայաստանի ղեկավարների եւ շատերիս պատերացումները Արցախի եւ Հայաստանի ապագայի առումով տրամագծորեն տարբեր են, ուղղակի շատերիս՝ մեծամասնության մտքերը գեներացնողները չեն երեւում դեռ. անցյալի իշխանություններից ոչ մեկի հանդեպ վստահություն չի կարող լինել, ներկան ընդհանրապես սպառել է վստահության բոլոր ռեսուրսները, իսկ դեֆակտո կյանքն ավելի է աղոտացնում երկաթե որոշումներ կայացնելու ունակ մարդկանց երեւակումը: Չկա մի Նժդեհ, որ ստանձնի արցախցուն ռեալ օգնություն հասցնելու դերակատարումը, խեղճուկրակ «խաղաղասիրականների» ֆոնին, չկա մի կատարյալ ելք, որով ավարտվի Արցախում տեղի ունեցող մղձավանջը: Տեսնես, իրոք, ո՞ւր են անհետացել նժդեհակերպ մեր տղամարդիկ: Տեսնես էլ ինչ վտանգներ կան Ադրբեջանին Հայաստանի փոխանցած նոր առաջարկների մեջ, որոնց մասին վերջին կառավարության նիստին հայտնի դարձավ:



Այս ֆոնին մայրաքաղաքային ավագանու ընտրությունը երեւանցիներիս մտածող հատվածի համար մի ուրիշ մղձավանջ է, երբ սոված, հյուծված, երկրին նվիրված արցախցու մասին ամենօրյա տեղեկության սպասումի վրա շրխկալու է կուշտ կերած, վաղուց բոլորիս իրենց պոպուլիզմով, աշխատել չկարողանալու եւ դիմափոխ լինելու հատկություններով հայտնի մարդկանց սնապարծ քարոզարշավը՝ քարոզարշավի ամեն նոր օրվա հետ այդ բոլորն ավելի նմանեցնելով ժանտախտի ժամանակ շամպայն ըմպելու ակտին:

Անձամբ ինձ մայրաքաղաքային ավագանու ընտրությունները հիշեցնում են անցյալ խորհրդարանական ընտրությունները, երբ խորհրդարարան անցած ներկա ընդդիմությունը մասնակցեց եւ լեգիտիմ դարձրեց այդ ընտրությունները՝ դրա դիմաց իր փայը ստանալով: Այսինքն մասնակցեց քաղաքական քարտեզի նախօրոք գծմանը՝ իբր ընտրություն խաղարկելով: Սա տասնամյակներով բյուրեղացված տեխնոլոգիա է՝ հին տեխնոլոգիաների կատարելագործված-մոդեռն ձեւերով, կարեւորը՝ պատրանք ստեղծելով, որ դա ընտրողն է անում իր քվեով:

Այս անգամ, ճիշտ է, նախորդ երկու նախագահների համակարգած ուժերը չեն մասնակցում մայրաքաղաքային ընտրություններին, բայց դա չի նշանակում, որ նրանք չեն սպասում իրենց հովանու տակ գտնվող արբանյակ ուժերին եւ գործիչներին, այդպիսով նպաստելով, որ վարչական, ֆինանսական, մարդկային ահռելի ուժի տիրապետող իշխանական թեկնածուն եւ նրա գլխավորած ուժը նորից մեծամասնություն ստանա, այս անգամ Երեւանի ավագանիում:

Այդ դեպքում, կհարցնեք, ո՞նց վարվել այն երկու-երեք ուժերի հետ, որոնք խոսում են մայրաքաղաքային ընտրությունները ամբողջական իշխանափոխության վերածելուց: «Է, դո՛ւք էլ խոսեք», ասվում է հայտնի անեկդոտում: Իրո՞ք կարելի է լուրջ վերաբերել ամբողջական իշխանափոխությունից խոսողներին, ի՞նչ եք կարծում, զրո ամբողջ քանի՞ տոկոս շանս ունեն: Իշխանափոխության մասին նրանց արածն իմաստ կունենար՝ եթե ընդդիմությունն ունենար քաղաքապետի միասնական թեկնածու, կամ՝ եթե ընդհանրապես իրեն ընդդիմադիր համարող որեւէ ուժ չմասնակցեր ընտրություններին, թողնելով իշխող ուժին միայնակ մասնակցելու ընտրություններին:



Մինչդեռ մայրաքաղաքի ավագանու ընտրության արշավը լավագույն հայելին է, որն անդրադարձնում է հայաստանյան իրողությունները՝ գաղտնի մտադրություններ, գաղտնի պայմանավորվածություններ, մեզ թույլ տալով լրացուցիչ անգամ արձանագրել, որ.

ա/ Հայաստանում քաղաքական գործընթացների ոչ մի սկզբունք շատ տեւական ժամանակ չի փոխվել՝ քաղաքական ուժերը ստեղծվում են որպես բիզնես- նախագծեր՝ իշխանությունը որպես շահույթի աղբյուր հետագայում կիսելու համար, այդ ուժերի ցուցակները կազմվում են ոչ թե ազգի արժանի ներկայացուցիչներից, այլ առաջվա նման ազգակցությամբ, շահերով, միմյանց ձեռք լվանալու արատավոր բարքերով, ներկլանային շահերով. ընդամենն ուսումնասիրեք մայրաքաղաքային ընտրությունների մասնակցության բոլոր ցուցակները:

բ/ Այդ ուժերն առաջվա պես համախմբվում են փողի, փողատերերի, եւ ոչ թե գաղափարների շուրջ, նրանք բոլորն այս կամ այն չափով կապված են Հայաստանում ավելի վաղ իշխանություն ունեցողների եւ այժմ իշխանություն ունեցողների հետ, ասել է, թե նոր ուժեր, չնայած երիտասարդ մարդկանց առկայությանն ընտրացուցակներում, չկան:

գ/ Ինչպես եւ նախորդ բոլոր ընտրություններում, այդ ուժերի մասնակցությունն ընտրություններին տարբեր նպատակներ է հետապնդում՝ մեկը ձայներ է փոշիացնելու, մեկն իշխանական թեկնածուի եւ նրա ուժի համար է կոմֆորտ ապահովելու՝ սեւացնելով նրա հակառակորդներին, մեկը կարգախոսների կոշտությամբ հետագայում իր պատառ տնտեսական շահն է փախցնելու, մեկը ճանաչելի դառնալու խնդիր է լուծելու: Անգամ նրանք, որոնք խոսում են մայրաքաղաքի ավագանու ընտրությունը հետագա իշխանափոխության ստարտ դարձնելուց: Նախկին քաղաքապետ կա, որ Երեւանի լծակների տիրապետման համն է մնացել բերանում, դերասանությունն իրեն քիչ է թվում, Ռոտենբերգ կամ Գուտենբերգ կա, որին Երեւանը վարելու -ցանելու խոպան է թվում, իշխող ուժի երկայացուցիչ կա, որի իբր սրտացավ ֆալշ-ստարտի կեղծ տոնը նորմալ մարդկանց համբերությունից հանում է , միայն Ֆիրդուսի թաղամասում կառուցապատողների լոտերի տերերի ցուցակն ուսումնասիրեք՝ կհասկանաք ֆալշստարտի ողջ փայլը, եւ այլն. անկեղծ չեք, պարոնայք ու տիկնայք, ոչ միայն անկեղծ չեք, այլեւ երեւանցուն ուզում եք հայտնի կենդանու տեղը դնել, հուսալով, որ այդ կենդանին ոչինչ չի հիշում, գնալու եւ ընտրելու է ձեզ:

դ/Այդ ուժերը, ինչպես Հայաստանում միշտ էլ ցավոք եղել է, իրենց թիկունքում տիկնիկավարներ ունեն՝ տարածաշրջանային խաղացող մեծ պետությունները, տարածաշրջանային ազդեցության քարտեզը, որ մասամբ արտացոլված է խորհրդարանում, պրոյեկտված է նաեւ մայրաքաղաքի ավագանու ընտրությունների մասնակիցների կազմում, շատ համեղ պատառ են Երեւանն ու Հայաստանը, որ այդ պետություններն իրենց տրոյական ձիերին չներդնեին այստեղ ամենուր, այդ թվում՝ քաղաքական ուժերի տեսքով, ցավոք: Հետեւեք քարոզարշավին ու մեկին-մեկ կտեսնեք:

Ավարտելով նշեմ, որ երեւանցին բոլորին էլ ճանաչում է, բոլորի դառնահամն էլ առել է, անգամ եթե գույն,զգեստ, մակիյաժ ու տատու եք փոխել կամ մորուք սափրել՝ էլի ճանաչում է, հիասթափված է իշխողից էլ, բոլորից էլ եւ գիտե, որ ինչպես շատուշատ անգամներ, հիմա էլ ուղղակի վարչական ռեսուրսն է աշխատելու, եթե , իհարկե, մինչեւ սեպտեմբերի տասնվեցը տեւելիք մայրաքաղաքային ընտրության ողջ այս քարոզարշավ-շոուն նրա համար չէ, որ իր պատեհությամբ կարեւոր որոշումներից, Հայաստանին ու Արցախին սպառնացող ճակատագրից շեղի հանրության ուշադրությունը:

Ես , իհարկե, հույս չեմ կորցնում, որ հայերն այդքան պրիմիտիվ չեն լինի, ու անցյալում էլ, հիմա էլ սխեմաներ գծողներից առաջ ընկնողներ կլինեն:

# Բեռլինից ակնկալում ենք Ստեփանակերտի հետ օդային կամրջի հարցը լուծել

⇨1

«Հա՞րցը», հիշեցրին սեղանի շուրջ նստած կառավարության խոսնակները: Անշուշտ ծանր է ունկնդրել այսպիսի փաստեր, եւ եթե խոսքը Պուտինի մասին չէ, հոգնում են գերմանացի պաշտոնատարները... «Հարցը հետեւյալն է, շարունակեց լրագրողը, կանցլեր Շոլցն ընդգծեց, ընդգծում է Ադրբեջանի էներգետիկ պոտենցիալի մասին...»: Դեռ լրագրողը խոսքը չէր ավարտել, երբ կառավարության խոսնակ Հեբեշթրայթը գլուխը շրջեց եւ ժպտաց՝ կողքին նստածի հետ հայացք փոխանակելով:

Ջեննի Գյունթերը շարունակեց՝ «էներգակիրներից օգուտ ստանալու պատճառով դաշնային կառավարությունը հանդուրժո՞ւմ է էթնիկ հայերի ցեղասպանությունը» (գերմաներեն հարցը խուսափել ենք բառացի թարգմանել, նախընտրելով իմաստային տարբերակը- Ան. Հ): Ժպիտը, ամբարտավան պահվածքն արդեն հուշում էր, որ Հեբեշթրայթի պատասխանը բարոյականությունը շրջանցելու է, բայց որ այդքան անհոգ եւ ցինիկ կարող էր լինել, երբ խոսքը ճանաչված եւ հարգված իրավաբան Մորենո Օկամպոյի մասնագիտական գնահատականի եւ մանավանդ 120 000 մարդու ճակատագրին՝ «ցեղասպանություն» աստիճանակարգմանն է վերաբերում եւ, որ առավել կարեւոր է՝ խոսքը հայոց, արցախահայոց ցեղասպանությանն է վերաբերում, դժվար է նույնիսկ կշռելը:

Այլեւս կարելի է կասկածի տակ դնել, թե 2016 թվականի հունիսի 2-ին Բունդեսթագի Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւը նպատակ ուներ նախ՝ ընդունելու Գերմանիայի անփառունակ դերը ոճրի մեջ, առերեսվելու սեփական պատմությանը, համապատասխանատվությունից ելնելով կանխելու հայոց նկատմամբ այդպիսի ոճրի կրկնությունը: Աֆրիկայում Նամա եւ Հերերո ցեղերի հանդեպ ցեղասպանություն իրականացրած Գերմանիան, նույն վարքագիծը շարունակել է առաջին համաշխարհայինի ժամանակ՝ Հայոց հանդեպ իր մեղքը ծանրացնելով, Երկրորդ համաշխարհայինի ժամանակ՝ հրեաների հանդեպ, սկսել է վերաշարադրել պատմությունը՝ Հոլոդոմորը Բունդեսթագի այս կազմը աշխույժ դասակարգեց «ցեղասպանություն»՝ չանսալով որեւէ մասնագետի, պատմաբանի գնահատականին: (Տե՛ս «**Ազգ**»-ում 02/12/2022-ին տպագրված «Գերմանիան վերաշարադրո՞ւմ է պատմությունը» հոդվածը): Եւ հիմա արցախահայության պարագայում անվտանգության երաշխիքներ տալու փոխարեն «ցեղասպանություն» դասակարգումը «քարոզչություն» է համարում: Ո՞վ պետք է կարգի հրավիրի դաշնային կառավարության խոսնակին, մեր պետության, նրա նախագահի, վարչապետի, ԱԺ նախագահի լռությո՞ւնը: Հեփեշթրայթը հրապարակավ ներում պիտի հայցի հայ ժողովրդից: Մանավանդ որ նրա պաշտոնակիցները չեն էլ դատապարտում խոսնակի անխոհեմ վարքը:

Ի դեպ HAYPRESS-ը գրավոր դիմել էր Գերմանիայի դաշնային կառավարության տեղեկատվության վարչություն եւ հարցրել, թե Հեբեշթրայթը վերանայե՞լ է իր՝ «ԼՂ-ում կատարվողը «ցեղասպանություն» դասակարգելը քարոզչություն է եւ մարտավարական գործիք» ձեւակերպումը: Տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնից ստացված պատասխանը չի էլ փորձում վերաձեւակերպել ասուլիսում հնչածը, ուստի խնայենք մեր սուղ տարածքը:



*Սա 1948 թվականի հայտնի լուսանկար է, որ պատկերում է, թե ինչպես է բեռլինցի երեխաների հիշողության մեջ ամրակայվել օդային կամրջով իրենց հասցված օգնությունը: Նրանք նույնը վերարտադրում են խաղի միջոցով:*




Գերմանահայ իրավաբանների միության նախագահ **Գուրգեն Պետրոսյանը** դաշնային կառավարության պահվածքը «ցինիկ» էր որակել: Ուրիշ հարմար բառ կա՞ այսպիսի բարոյազուրկ պատասխանը, պահվածքը ճշգրիտ բնութագրելու համար: Նույն որակումն է տվել կառավարության խոսնակի պատասխանին Գերմանիայում հայտնի լրագրող Անաստասիա Տիխոմիրովան (Anastasia Tikhomirova) օգոստոսի 24-ին taz-ում լույս տեսած հոդվածում, որ դիպուկ վերնագրված է «Ցինիկ եւ պատմությունը մոռացության մատնող»: Հեղինակը գրում է, որ Արցախում շրջափակման մեջ գտնվողների մտապատկերի մեջ վերարթնանում է 1915-ի Աղետի մութ հիշողությունը, եւ ողբերգական պատմության մեջ Գերմանիայի դերակատարումը հիշելով դաշնային կառավարության խոսնակի պատասխանը այդ պատճառով առավել ցինիկ եւ պատմությունը մոռացող կարելի է համարել:

Առցանց տարբերակում նշել էինք, որ Բեռլինում ՀՀ դեսպան **Ենգիբարյանը** RND-ին օգոստոսի 18-ի հարցազրույցում ակնարկել էր, որ Ադրբեջանը էթնիկ զտման համար սովն է որպես զենք օգտագործում, սակայն այս պարագայում Ադրբեջանի դեմ պահանջին ՀՀ ԱԳՆ պիտի գումարի իր դժգոհությունը նաեւ Գերմանիայի դաշնային կառավարությանը: Մեզ առայժմ ծանոթ չէ ԱԳՆ-ից արձագանք եղե՞լ է, թե՞ ոչ: Իրազեկ ենք դարձել, որ Հայոց ցեղասպանության ինստիտուտ-թանգարանն է գրավոր ընդվզել, գերմանահայ կառույցները՝ ի թիվս Գերմանահայոց կենտրոնական խորհրդի: Սոցհարթակներում արձագանքել են Գերմանիայում ճանաչված օգտատերեր: Եւ որ ակնկալելի էր՝ գերմանական մեդիան, որ այս պահին ընդգծում է, թե ԼՂ կայացած պետական միավոր է, ունի նախագահ եւ 120 000 բնակիչ, որ ցեղասպանվում է՝ սովի է մատնված:

Ինչպես նախորդ ուրբաթ՝ օգոստոսի 18-ի տպագիր «**Ազգ**»ում էինք նկատել «Գերմանագիր մամուլում Արցախը սուբյեկտ է, իր մասին ի՛նքն է խոսում» հոդվածով, գերմանագիր լրագրությունն իր գործը բարեխիղճ կատարում է, մնում է քաղաքական գործիչներն ու դիվանագետները Պիղատոս չլինեն: HAYPRESS-ը ուշագրավ դիտարկում է անում՝ ԼՂ հարցում լռությունը չխախտող Բունդեսթագից, այդուհանդերձ արտահայտվեցին թվիթերյան գրառմամբ, որոնք էլ զարմանալի է, Ազատ դեմոկրատական խմբակցության երկու պատգամավոր՝ **Փեթեր Հայդթը** (Peter Heidt) եւ **Ուլրիհ Լեյիթեն** (Ulrich Lechte): Առաջինը հղում է անում Մորենո Օկամպոյի «ցեղասպանություն» որակմանը եւ կոչ անում միջազգային հանրությանը անհապաղ գործել: Երկրորդը պահանջում է Կարմիր խաչի անխափան աշխատանք:

Գերմանական «Ֆրանկֆուրտեր ռունդշաու»-ն («ՖՌ») օգոստոսի 23-ին ծավալուն եւ մանրամասն անդրադարձավ Արցախում սովամահության դեմքին, Մորենո Օկամպոյի գլխավոր շեշտադրումը վերնագրում արդեն փոխանցելով՝ Ադրբեջանը ցեղասպանություն է իրականացնում: **Լիզա Մարթինա Քլայնը** (Lisa-Martina Klein) հենց առաջին պարբերության մեջ շեշտում է, որ աղետալի իրավիճակը «դե ֆակտո անկախ ԼՂ շրջանում է»: «Առաջին անգամ է, որ բարձրաստիճան միջազգային փորձագետը Ադրբեջանի գործունեությունը բացահայտորեն որակում է որպես ցեղասպանություն», նշում է հոդվածագիրը, նաեւ մեջբերումներ անում Մորենո Օկամպոյի 28 էջանոց զեկույցից, ինչպես նաեւ հեղինակավոր իրավաբանի գերմանական Table.Media-ին տված մեկնաբանությունից, թե « ուզում եմ իմ ներդրումն ունենալ ցեղասպանության ժխտումը կանխելու մեջ: Պատասխանատվությունն այժմ կրում են ցեղասպանության կոնվենցիայի 153 մասնակից պետությունները, այդ թվում՝ Գերմանիան, եւ նրանք պարտավոր են կանխել ցեղասպանությունը»: «Ֆրանկֆուրտեր ռունդշաուն» ներկայացնում է դաշնային կառավարության խոսնակ Հեփեշթրայթի արձագանքը՝ առանց գնահատական տալու, նաեւ փոխանցում ԳԴՀ ԱԳՆ-ի խոսնակի հետեւյալ պատասխանը՝ «Դաշնային կառավարությունն աջակցում եւ մասնակցում է խաղաղության եռակողմ բանակցություններին, որոնք նախաձեռնել է Եվրոպական խորհրդի նախագահ **Շառլ Միշելը**, ինչպես նաեւ ողջունում է ԱՄՆ-ի համապատասխան նախաձեռնությունները»: Կոնկրետ քայլերը ներառում են Կարմիր Խաչի տեղական եւ Հայաստանում ԵՄ առաքելության (EUMA) աջակցությունը»: Անդրադառնալով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստին, որից հետո բանաձեւ չհրապարակվեց, հոդվածագիրը գրում է «Այժմ Ալիեւի վրա ճնշում են գործադրում նույնիսկ մերձավոր դաշնակիցները, ինչպիսիք են Իսրայելը եւ Թուրքիան, որոնք երկուսն էլ զենք են մատակարարում Ադրբեջանին: (Հեղինակը չի մանրամասնում, թե ի՛նչ են անում- **Ան. Հ**.) ԱՄՆ-ը, որը ակտիվ միջնորդի դեր է խաղում, հետաձգում է Բաքվին ուղղված ռազմական օգնության երկարամյա ծրագրի թարմացումը՝ ցեղասպանության մեղադրանքների ֆոնին»: «ՖՌ» ներկայացնում է Հայաստանում Ֆրիդրիհ Էբերտ հիմնադրամի քաղաքագետ **Նարեկ Սուքիասյանի** հիասթափությունը՝ «Երբ ՄԱԿ ԱԽ սպառում է հնարավորության տարբերակները, էլ ի՞նչ է մնում»: «ՖՌ» անդրադառնում է Ադրբեջանի՝ հրադադարը խախտելու վերջին լարվածություններին, նաեւ ԵՄ դիտորդներին ուղղված 4-5 կրակոցին :«Չնայած դրանց թիրախը հնարավոր չի եղել պարզել, պարեկային խումբը ձեռնարկել է անհրաժեշտ պաշտպանական միջոցներ եւ լքել տարածքը», ասել է ԵՄ դիտորդական խմբի ներկայացուցիչը՝ Table.Media-ին:

Հուլիսի 21-ին «**Ազգ**»ում «Պաշտոնական Բեռլինից ակնկալում ենք «Լյուֆթբրյուքե Ստեփանակերտը» կյանքի կոչել» վերնագրով մեր հոդվածի վերջաբանում ընդգծել էինք՝« այս պահին ազնիվ կլինի, եթե Բեռլինը պնդի մարդասիրական օդային հաղորդակցությամբ Ստեփանակերտ սնունդ եւ դեղորայք առաքելու հրատապությունը:

⇨5

# 7 թակարդից պանիր կերածը

ՆԱԻՐԻ ՅԱՆ



Սեպտեմբերի 17-ին որոշվելու է Փաշինյանի իշխանության կարճ կամ երկար լինելու հարցը: Երեւանն է որոշում ամբողջ Հայաստանի ու Արցախի ճակատագիրը, ուստի քաղաքապետի ընտրությունները իրականում Փաշինյանի իշխանության վերահաստատման ու երկարացման, վերարտադրման ու անվտանգության համար թեժ պայքար պետք է դիտարկել: Երեւանի ավագանու նախընտրական քարոզարշավը մեկնարկել է, կուսակցությունները մեզ բուկլետախեղդ են անելու, ամեն քայլափոխի ու հատկապես աղբարկղերում թեկնածուների պաստառների, նախընտրական ծրագրերի կույտերը սովորական տեսարան են դառնալու:

Հայաստանյան համատարած քաոսում, բութ անորոշության մեջ մի ուրիշ քանձրույթ է ձեւավորվել՝ քաղաքապետի ընտրություններ՝ 13 համեմունքով:

«Հայաստանի եվրոպական», «Ժողովրդավարական համախմբում», «Քաղաքացիական պայմանագիր», «Հանուն սոցիալական արդարության», «Ուժը հայրենյաց», «Հանրային ձայն», «Ազգային առաջընթաց», «Հաղթանակ», «Ապրելու երկիր», «Հանրապետություն», «Միացյալ Հայաստան», «Արդար Հայաստան», «Լուսավոր Հայաստան» կուսակցությունները և «Մայր Հայաստան» (կազմում՝ «Երկիր Ծիրանի» եւ «Ինտելեկտուալ Հայաստան» կուսակցությունները) դաշինքը պայքարելու են Երեւանի քաղաքապետի պաշտոնի ու ավագանու կազմ մտնելու համար:

Բոլորն սկսել են սիրո, նվիրումի, անձնազոհության խոստովանությունները երեւանցիներին: Ջուր չունեք, ձեզ ջրասույզ կանենք, աղբի մեջ կորել եք, աղբազերծ կանենք ձեզ, օդ չունեք շնչելու, ձեզ օդային համբույրներ կուղարկենք, շենքերի արանքում խեղդվում եք, շենքերի մեջ կխեղդենք ձեզ, կանաչ տարածք եք ուզում, խառը կանաչի կբերենք ձեզ, խցանումներից հոգնել եք, ձեզ խցանահանիչներ կբաժանենք...

Մի տեսեք՝ ինչ հնչեղ անուններ են՝ «Հայաստանի եվրոպական» կուսակցություն, «Հաղթանակ», «Ապրելու երկիր»...մեկը մյուսից խոստումնալից, ժայռ ճաքացնող, երկինք պատռող, մի Երեւանն ի՞նչ է, որ չկանաչապատեն, աղբը չհավաքեն, օդը չմաքրեն, մետրո ու ճոպանուղի չկառուցեն:

Բայց բոլորից փորձառուն, 7 թակարդից պանիր կերածն, իհարկե, «Քաղաքացիական պայմանագիրն» է:Պատերազմում պարտված, կորոնավիրուսին հանձնված, Արցախ հանձնած, 5000 երեխա զոհած, բանակը ոչնչացրած, բոլոր ոլորտները տապալած, ժողովրդի ինքնապաշտպանական բնազդները սպանած իշխանությունը եթե 2021-ի հունիսի 20-ին հաղթեց ընտրություններում, ի՞նչն է խանգարում նրան 2023-ի սեպտեմբերի 17-ին հաղթելու ախորժակ չունենալ:

«Ասե՛ք, կանենք» կարգախոսը քարոզարշավի առաջին իսկ օրվանից՝ օգոստոսի 23-ից, սկսեց արագ տարածվել սոցիալական հարթակներում: Ինչպես միշտ, այս անգամ էլ ՔՊ-ն մշակել է էժան ու արդյունավետ տեխնոլոգիա՝ հասանելի հանրության լայն զանգվածներին, ավելի ճիշտ՝ ընտրազանգվածին: Պարզ ու հասկանալի է, ինչպես «Մերժիր Սերժին»-ը, «Ապագա կա»-ն. նույն ձեռագիրն ու ծրագիրն է կամ՝ նույն ձեռագրով գրված ծրագիրը՝ իբր դուք ասողն եք, մեր տերը, իսկ մենք կատարողը, ձեզ ծառայողը:

«Ասե՛ք, կանենք»-ը տարբեր խոնարհումներով սկսեց արագ գործածվել նաեւ թունդ ընդդիմադիր հարթակներում ու նիկոլամերժ օգտատերերի էջերում, օրինակ՝ ասում ենք՝ հեռացեք (իհարկե, սոցցանցերում «հեռացեք»-ին մեծ մասամբ փոխարինում են անհամեմատ կոպիտ բառերի հրամայական եղանակները), ասում ենք՝ մի խաբեք, ասում ենք, բա ինչի՞ չեք անում, ասում ենք՝ ռադներդ քաշեք, բայց անում ե՞ք եւ այլն...

Առաջին հայացքից թվում է՝ ՔՊ-ի հակագովազդն է, բայց հակագովազդն էլ է գովազդ: Բացի այդ, այսպես, թե այնպես, ՔՊ-ի նախընտրական կարգախոսն առաջին իսկ օրվանից ակտիվորեն ու շատ արագ սկսեց շրջանառվել ու տարածվել, ու այստեղ կապ չունի՝ բացասական ենթատեքստով է, թե՞ ոչ: Մի քանի րոպեում այդ կարգախոսը հիշվեց ու տարածվեց այնքան արագ, ինչպես մյուս 12 կուսակցությունների գովազդները չեն կարող հիշվել ու տարածվել մի քանի տարում: Այսպես են ազդում տեխնոլոգիաները մարդկանց գիտակցության ու ենթագիտակցության վրա, եթե հմտորեն են մշակված ու մի քանի անգամ փորձարկված նույն հասարակության վրա:

«Ասեք, կանենք»-ը արդեն բառախաղի է վերածվել, հումորներ ու քառատողեր են հորինվում դրա շուրջը ու գնդակի պես «պաս տալիս» այսուայնկողմ: ՔՊ-ն ու դրա խորհրդանիշ **Փաշինյանը Տիգրան Ավինյանի** տեսքով նորից է ժողովրդին «հնազանդվելու եւ խոնարհվելու» իր սովորույթը գործի դնում: Իհարկե, ընտրազանգվածը շատ էլ ծանրութեթեւ չի անում՝ իրենք ասե՞լ են, որ պատերազմ լինի, որ 5000 երեխա մսաղացին հանձնվի, ասե՞լ են, որ ադրբեջանական զորքերը մտնեն Հայաստանի տարածք ու դուրս չգան, որ 150 քմ գրավեն ու իրենց դրոշը տնկեն այդտեղ, իրե՞նք են ասել՝ Արցախն Ադրբեջան է, կամ Հայաստանը չունի կադաստրի թուղթ: Չէ, իրենք չեն ասել, բայց քանի որ այս բոլորն ասողին ու անողին իրենք են ընտրել, ստացվում է, որ հենց իրենք էլ ասել են ու արել: Հիմա նույն ընտրազանգվածին իշխանությունը դեմ է տալիս՝ էլի ասեք, կանենք:

Ընտրազանգվածն ասե՞լ է, որ Երեւանի ծառերը կտրեն ու սակուրաներ տնկեն, որ Երեւանը դարձնեն շինհրապարակ ու փոշու, կեղտի քաղաք: Չի ասել, բայց իշխանություններին ասող պետք չի, իրենք ասում, իրենք անում են: Բայց դե պոպուլիզմը սուրբ բան է, պետք է հնազանդության ու խոնարհումի իմիտացիա ստեղծել այն ընտրազանգվածի համար, որը տարիներ առաջ հալվեց Փաշինյանի «ես ձեզ սիրում եմ, խոնարհվում եմ ձեր առաջ, ես հպարտ եմ ձեզնով» մեղրածոր բառերից: Այդ ընտրազանգվածը դեռ կա. Նրա համար ո՛չ պատերազմ է եղել, ո՛չ Հայաստան ու Արցախ է հանձնվել, ո՛չ պետականություն ու պետություն ենք կորցնում, ո՛չ էլ ցեղասպանվելու սպառնալիք կա: Հենց նրա վրա էլ խաղագվելու է «ասե՛ք, անենք»-ը:

# Ընդդիմությունն Արցախի հարցով «հայտարարությունների ժամ» կանի



2000-ականներից հայտնի անեկդոտ կա: Ուղեւորը հապշտապ տաքսի է նստում ու խիստ վրդովված ձայնով հրահանգում վարորդին՝ «Քշի Թուրքիա»: Վարորդը զարմացած հարցնում է. «Թուրքիա ի՞նչ կա, ա՛յ ախպեր»: «Ո՞նց չգնամ,-ասում է ուղեւորը,- Բա իմացե՞լ ես դրանք հարյուր տարի առաջ ի՞նչ են արել, սպանել են, ցեղասպանել են մեր ժողովրդին»: «Ա՛յ ախպեր, 100 տարի առաջ ցեղասպանել են, նո՞ր ես Թուրքիա գնում»,- հակադարձում է վարորդը: «Բա նոր իմացա»,- խիստ վստահ տոնով շեշտում է ուղեւորը:

Ճիշտ նույն իրավիճակում է հայտնվել հայրենի ընդդիմությունն՝ ի դեմս խորհրդարանական «Հայաստան» խմբակցության ու «Դաշնակցություն» կուսակցության: Ավելի քան յոթ ամիս շրջափակման մեջ գտնվող Արցախի հարցով սեպտեմբերի 2-ին հանրահավաք են հրավիրում՝ ցույց տալով, թե Արցախը միայնակ չէ: Իհարկե, շրջափակման թեմայով Փաշինյանի թիմի հետ գործուղումների մեկնող ուլտրաընդդիմադիրներն էլի են 1-2 հավաքներ ունեցել, բայց դրանից հետո սայլը տեղից չի շարժվել: ՀՅԴ ներկայացուցիչ **Իշխան Սաղաթելյանի**՝ Արցախի անկախության օրը հանրահավաք նախաձեռնելու հրավեր-ազդագիրը Facebook-ի իրենց էջերին դրել են բոլոր կուսակցականները: Դաշնակցական պատգամավորներից մեկի գրառման ներքո մեկնաբանություն թողեցի. «Իսկ հանրահավաքից հետո գործողությունների ի՞նչ հաջորդականություն է լինելու, թե՞ ուղղակի հայտարարությունների ժամ եք հայտարարել»: Հարց, որը, ցավոք, անպատասխան մնաց:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

# Բեռլինից անկալում ենք Ստեփանակերտի հետ օդային կամրջի հարցը լուծել

⇨4

Երկրորդ աշխարհամարտի պատճառով երկու բեւեռների միջեւ բաժանված Բեռլինը տեսել եւ մինչ օրս պատմում է այդ մարդասիրական «Լյուֆթբրյուքե Բեռլինի» մասին: Հենց այդպիսի օդային կամուրջ՝ «Լյուֆթբրյուքե Ստեփանակերտը» պիտի կյանքի կոչի պաշտոնական Բեռլինը, որ բարոյական իրավունք ունենա հայ-ադրբեջանական հակամարտության մեջ միջնորդ լինել»:

Ուրախ ենք փոխանցել, որ գերմանացի մեր գործընկեր **Թոբիաս Էսսերը** (Tobias Eßer) օգոստոսի 20-ին նույն բանի անհրաժեշտությունն է տեսնում: t-online հարթակում օգոստոսի 22-ին հեղինակն իր կարծիքն է հրապարակել, նաեւ սուր քննադատել դաշնային կառավարության խոսնակի պատասխանը: Էսսերը հիշեցնում է, որ այս պահին, երբ Արցախում վտանգված է մարդկանց ճակատագիրը, արտգործնախարար **Բերբոքը** պիտի ցույց տա, որ իր՝ «արժեքների վրա հիմնված արտաքին քաղաքականություն» արտահայտությունը բառերի դատարկ պարկուճ չէ: Փոխարենը ՝ լռություն է տիրում: Սա ամենից առաջ մեկ բան է՝ անպատասխանատվություն» գրում է Էսսերը: «Դաշնային կառավարությունը չպետք է աչք փակի, երբ ցեղասպանություն է սպառնում: Այս պարագայում իհարկե, չպետք է ակտիվացնի հարաբերությունները Ադրբեջանի ռեժիմի հետ», գրում է հեղինակը՝ շեշտելով. «Հատկապես այն ժամանակ, երբ արտաքին քաղաքականության հենարանն արժեքն է հռչակում»:

Էսսերը Գերմանիային հիշեցնում է հայացք նետել սեփական պատմությանը: Երբ 1948 թվականին խորհրդային օկուպացիան փակեց մուտքը դեպի Արեւմտյան Բեռլին, դաշնակից Ֆրանսիան, ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան օդային կամրջի միջոցով մատակարարումը հասցրին Արեւմտյան Բեռլին: Թերեւս ժամանակն է նման օդային միջանցքի ստեղծումը, եւ այդպիսով բարելավել մատակարարման իրավիճակը Լեռնային Ղարաբաղում, մինչեւ դիվանագիտական լուծումը հասանելի լինի», գրում է Թոբիաս Էսսերը:

# Վայ-հարեւանը մեզ հետ հաշտ չի ապրի, նա հայերի նկատմամբ գենետիկ ատելություն ունի

Պաշտոնական Ստեփանակերտը թեեւ նշում է, որ այս պահին Ակնայի ճանապարհով Բաքվի հետ առեւտուր անելու որոշում չունի, բայց չի էլ հերքում, որ դա ինչ-որ փուլում կարող է իրականություն դառնալ:

«Արայիկ Հարությունյանը օգոստոսի 22-ին եւ 23-ին փակ քննարկումներ է անցկացրել պետական, քաղաքական եւ հանրային շրջանակների հետ: Իշխանության մոտեցումները նախագահը կներկայացնի առաջիկայում»,- հավելում է **Արայիկ Հարությունյանի** մամուլի քարտուղար **Լուսինե Ավանեսյանը**:

Ակնայով հաղորդակցվելու մասին Բաքուն խոսում է տեւական ժամանակ: Ադրբեջանագետ **Գառնիկ Դավթյանն** այն համոզմանն է, որ Արցախի՝ Ադրբեջանի հետինտեգրման գործընթացը սկսվել է այն բանից հետո, երբ նախորդ տարի Պրահայում **Փաշինյան-Ալիեւ-Մակրոն** եռակողմ հանդիպումից հետո Հայաստանի վարչապետը ճանաչեց Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Դավթյանի խոսքով՝ Բաքվի հետ անհնար է որեւէ տեսակի հարաբերություն հաստատել: «**Ազգ**»-ի հետ զրույցում Դավթյանն ասում է՝ վայ-հարեւանները խաղաղ ապրելու ցանկություն, էլ ուր մնաց մտադրություն եւ տեսլական չունեն: «Այս գործընթացներն ավելի են ահագնանալու եւ արագանալու: Ինտեգրման հարցում, ցավոք, արցախյան վերնախավը գլուխը խոնարհողի ու պայմանները ընդունելողի դերում է:



Ադրբեջանցիների հետ անհնար է խաղաղ ու հաշտ ապրել կողք կողքի: Հարեւանների բառապաշարում ու մտածելակերպում հայերի նկատմամբ անհանդուրժողականությունը սահման չի ճանաչում: Նրանք գենետիկ ատելություն ունեն հայերի նկատմամբ, ու կապ չունի՝ հայերն Արցախում են ապրում, թե՞ այլ տեղ: Դա նրանց մոտ արմատացած է ավելի քան երեւում սարի,- մեկնաբանում է ադրբեջանագետն ու ավելացնում,- Մյուս կողմից՝ ադրբեջանցիները միշտ խոսում են այն մասին, որ Հայաստանում իշխանության են ուզում գալ ռեւանշիստները, մեր դեպքում՝ հայրենասեր ու ազգասածրող մարդիկ»:

Ադրբեջանի նախագահը չի էլ թաքցնում, որ իր նպատակը հայերի ու հայկական պետության ոչնչացումն է, հետեւաբար իրատեսական չէ, որ ժամանակի հետ ադրբեջանցիներն առավել հանդուրժող դառնան:

Խաղաղասիրական չեն անգամ խաղաղության մասին ադրբեջանական պատկերացումները: Ալիեւի կառավարման շրջանում առնվազն երկու սերունդ մեծացել է հայերին ատելու մթնոլորտում ու դա բազմիցս ապացուցվել է՝ սկսած Սաֆարովից, որ առավել ցայտուն օրինակ է մինչեւ 44-օրյա պատերազմ: «Պատերամի ժամանակ դեպքեր գիտենք, չէ՞, ինչպես են խաղաղ բնակչությանը սպանել, մորթել եւ այլն: Այդ մարդկանց ուղեղում նստած է, որ հայերը վատն են, ու դա արել են ֆիլմերով, մուլտերով, կեղծ պատմություններով ու այլ մեխանիզմներով: Հիմա փորձել մեզ ասող մարդկանց համոզել, թե հայերն այդպիսին չեն, հնարավոր չէ»,- մանրամասնում է մեր զրուցակիցը:

Դավթյանն առավել քան վստահ է նաեւ, որ Ադրբեջանը չի ազդվել ու չի ազդվելու միջազգային ատյանների՝ խաղաղության հորդորներից: Ըստ նրա՝ հայերի նկատմամբ, մեղմ ասած, բացասական վերաբերմունքն ու ընկալումներն առնվազն առաջիկա տասնամյակներին չեն փոխվելու:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

# «ՄԱԿ-ի ԱԽ նիստը կոշտ սթափեցում էր Հայաստանի իշխանությանը»

Լեռնային Ղարաբաղը շարունակում է մնալ շրջափակման աքցանի մեջ, որի հետեւանքով իսկական հումանիտար աղետ է հասունանում, սակայն Բաքուն մտադիր չէ սպասել եւ հույս ունի Երեւանին վերջնական կապիտուլյացիա պարտադրել արդեն ռազմական ճանապարհով: Օգոստոսի 22-ին «Պոլիտնավիգատոր» լրատվական կայքում հրապարակված իր հոդվածում այսպիսի վասատեսական կանխատեսում է անում այդ կայքի միջազգային մեկնաբան, ղազախստանցի քաղաքագետ, հասարակական գործիչ **Այնուր Կուրմանովը**:

Օգոստոսի 16-ին Հայաստանի լիբերալ իշխող վերնախավը փորձեց օգտագործել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ամբիոնը՝ արտակարգ նիստում լուսաբանելու Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման թեման, գրում է նա, բայց ձեռնարկի արդյունքը ձախողումը եղավ. չընդունվեց անգամ ամփոփիչ հայտարարություն, էլ չխոսելով բանաձեւի մասին: Սա, նկատում է քաղաքագետը, կոշտ սթափեցում է երկար տարիների պաշտոնական այն քարոզչությունից հետո, թե ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան եւ Ֆրանսիան Հայաստանի անվտանգության ինչ-որ երաշխավորներ են ու անպայման օգնության կգան ԼՂՀ բնակչությանը: Եվ հիմա արեւմտյան տերությունները թքած ունեն, որ չճանաչված հանրապետության 120 հազար բնակչի կործանում է սպառնում: Մինչդեռ դա էր 2022 թվականի հոկտեմբերին Պրահայում հակառուսական «խառնաժողովի» բանակցությունների հիմնական գաղափարը, երբ ԵՄ-ի եւ Ֆրանսիայի առաջնորդները երդվեցին **Նիկոլ Փաշինյանին**, որ թույլ չեն տա հայերի ցեղասպանություն:

Տեղի ունեցողը, Կուրմանովի գնահատմամբ, Բաքվի հետ Արեւմուտքի պայմաններով խաղաղության պայմանագիր քննարկելու Նիկոլ Փաշինյանի հանձնվողական քաղաքականության տրամաբանական արդյունքն է, որն ի սկզբանե նախատեսում էր Արցախի եւ ԼՂՀ հայ բնակչության հանձնումը **Իլհամ Ալիեւի** ողորմածությանը:






Երեւանը պարզապես Բրյուսելին, Փարիզին ու Վաշինգտոնին հաճոյանալու համար ժամանակին մերժեց համաձայնագրի Մոսկվայի առաջարկած տարբերակը, որտեղ Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի որոշումը երկարաժամկետ հետաձգվում էր, իսկ հանրապետությունը պահպանվում էր (արդյո՞ք - **Գ. Մ.**), նույնը եւ՝ ռուսական խաղաղապահ զորախմբի ներկայությունը:

Վերջնական քայլը, որը հանգեցրեց ներկա իրավիճակին, ինչպես նշվում է, Նիկոլ Փաշինյանի հայտարարությունն էր Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչման մասին, մինչդեռ ի պատասխան Բաքուն իր հերթին նման ժեստ այդպես էլ չի արել՝ նպատակ ունենալով արդեն հենց Հայաստանի տարածքները: Ավելին, Իլհամ Ալիեւը հրաժարվել է որեւէ երաշխիք տրամադրել Արցախի ժողովրդին եւ դա քննարկել որեւէ մեկի, այդ թվում՝ Արեւմուտքի հետ:

Եվ գլխավորը՝ Բաքուն վստահ է, որ ԼՂՀ բնակչության հումանիտար խեղդամահության կառուցված համակարգի համար իրենց ոչինչ չի լինի, քանի որ Բրյուսելը, Վաշինգտոնը, Լոնդոնը եւ Փարիզը կենսականորեն շահագրգռված են Հայաստանի հարավում Զանգեզուրի տրանսպորտային միջանցքի բացման հարցում, որի միջոցով Ղազախստանից նավթը եւ հազվագյուտ մետաղները կտեղափոխվեն Կասպից ծովի տարածքով: Այդ պատճառով էլ, ըստ Այնուր Կուրմանովի, արեւմտյան բոլոր իմպերիալիստական ուժերն աչք են փակում ադրբեջանցիների ռազմական ամեն մի հանցագործության վրա՝ Արցախն ու նրա բնակիչներին համարելով անխուսափելի զոհ եւ սակարկության առարկա՝ Իլհամ Ալիեւի բարեհաճությունը գնելու հարցում: Ալիեւի, որն իր երկրում եւ ընդհանրապես Հարավային Կովկասում ստեղծում է ոչ միայն Թուրքիայի, այլ նաեւ ՆԱՏՕ-ի հենակետ: Եվ ստացվում է, որ Ադրբեջանի վերջնական հաղթանակը կարող է նշանակել Հյուսիսատլանտյան դաշինքի դիրքերի ամրապնդումը տարածաշրջանում...

Գ. Մ.

Ազգ
ՀԱՎԵԼՎԱԾ
ՄՇԱԿՈՒՅԹ
Թիվ 30(5764)
25-31 ՕԳՈՍՏՈՍ
2023

ՀԱՍՄԻԿ ՍԵՅՄՈՒՐ
Լոնդոն

# Լուսեղեն Հրաչուհի Բասենցը Լոնդոնի Արքայական Օպերայի բեմում

*ԼՈՆԴՈՆ - Լոնդոնի Քովենթ Գարդենի Արքայական Օպերային թատրոն այցելությունը զարմանահրաշ մի տոն է ոչ միայն օպերայի գիտակների, այլեւ դասական երաժշտության սիրահարների՝ թե՛ լոնդոնաբնակների, թե՛ հարյուր հազարավոր զբոսաշրջիկների համար: Այս այցելությունը ֆանտաստիկ ավելի հիշարժան է դառնում, երբ Բրիտանիայի մայրաքաղաքի սրտում գտնվող այս լեգենդար բեմում ելույթ է ունենում մեր հայրենակիցը, հայազգի արվեստագետը:*

*2023 թ. հուլիսին լոնդոնյան հանդիսատեսը հնարավորություն ունեցավ ըմբոշխնելու միանգամից հանրահայտ երկու հայազգի օպերային երգիչների՝ **Հրաչուհի Բասենցի** («Ֆիգարոյի ամուսնությունը») եւ տենոր **Լիպարիտ Ավետիսյանի** («Տրավիատա») ելույթները, ում հիասքանչ կատարումներով եզրափակվեց 2022-2023 թթ. Լոնդոնի օպերային տարեշրջանը:*

*Գերմանաբնակ մեծանուն սոպրանո Հրաչուհի Բասենցը առաջին անգամ չէր հանդես գալիս Քովենթ Գարդենում: Արքայական օպերային թատրոնի գեղարվեստական ղեկավար, աշխարհահռչակ մաեստրո **Անտոնիո Պապանոյի** հրավերով, Բասենցը Լոնդոն հրավիրվեց դեռեւս 2016 թվականին: Իսկ հայազգի սոպրանոյի դեբյուտը կայացավ 2017 թվականին «Ադրիանա Լեկուվրոր» օպերայում, միանգամից գլխավոր դերը կիսելով աշխարհահռչակ սոպրանո **Անջելա Գեորգիուի** հետ: 2006-ից սկսած Հրաչուհին ավելի քան մեկ տասնամյակ եղել է Դրեզդենի Սեմպերօպերի եւ Նյուրնբերգի պետական օպերային թատրոնի առաջատար սոպրանոներից ու մշտական անդամներից մեկը: Նա մարմնավորել է օպերային ամենահայտնի կանացի դերերը՝ Նորմա, Վիոլետա, Միմի, Դեզդեմոնա, Լեոնորա, Դոննա Էլվիրա, Կոմսուհի Ալմավիվա եւ Ադրիանա Լեկուվրոր՝ Ավստրիայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Իսրայելի բեմահարթակներում:*

*2022 թ. հուլիսին ինձ բախտ վիճակվեց Քովենթ Գարդենի Արքայական Օպերայում ունկնդրելու Հրաչուհի Բասենցին Դեզդեմոնայի դերում: Ավելին, պատիվ ունեցա հարցազրույց ունենալ Հրաչուհու հետ՝ նրա դերի եւ Վերդիի «Օթելլո» օպերայի բեմադրության մասին: Իսկ այս ամառ հուլիսին հանրահռչակ հայուհին լոնդոնյան բեմ վերադարձավ կոմսուհի Ալմավիվայի դերերգով՝ Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը» օպերայում: Մոցարտի երգիծական օպերան գրված է ֆրանսիացի մեծանուն դրամատուրգ **Բոմարշեի** համանուն կատակերգության հիման վրա, որտեղ բացահայտվում են ամուսնական կյանքի անհավատարմությունները, սիրո անսպասելի շրջադարձերը, իշխող դասակարգի երեսպաշտությունը, վերնախավի երկակի ստանդարտներն ու քաղաքական այրերի ապաշնորհությունը... Ռեժիսոր **Սըր Դեյվիդ Մըքվիքարի** շքեղ բեմադրությունը եւ ժամանակաշրջանի ճոխ զգեստները համապատասխանում էին Հրաչուհու՝ կոմսուհի Ալմավիվայի մեկնաբանությանը՝ նրա բեմական ներկայությունը դարձնելով ավելի տպավորիչ, իսկ կատարումը՝ ավելի գունեղ: Վերջին զգեստավորված փորձից հետո, որին ես ներկա էի երգչուհու բարեհաճ հրավերով, Հրաչուհու հետ զրուցեցինք նրա կերպարի, Մոցարտի օպերայի եւ համաշխարհային օպերայի Օլիմպոս նրա աստղային վերելքի մասին:*





**-Սիրելի՛ Հրաչուհի, կարելի՞ է իմանալ քո տպավորությունները Քովենթ Գարդենի Օպերայի մասին: Սիրո՞ւմ ես այստեղ ելույթ ունենալ եւ ինչո՞ւ:**

-Քովենթ Գարդենի Արքայական Օպերային թատրոնը ինձ համար դարձել է շատ հարազատ եւ շատ ցանկալի բեմահարթակ: Այո՛, շատ սիրում եմ այս թատրոնում ելույթ ունենալ, այն ինձ մեծ երաժշտական, պրոֆեսիոնալ բարձր աշխարհ հանած, ճանաչելիություն նվիրած թատրոնն է: **Հակոբ Ասատրյանի** «Օրեր» ամսագրին տված հարցազրույցներիցս մեկում մանրամասն անդրադարձել էի, թե ինչպիսի հետաքրքրական եւ հրաշք ճանապարհով հրավիրվեցի այս պատմական թատրոն եւ այն էլ միանգամից համանուն օպերայում դերերգով՝ սկզբում Նորմայի, այնուհետեւ Ադրիանա Լեկուվրորի՝ վերջինս կիսելով մեր ժամանակների մեծագույն դիվա Անջելա Գեորգիուի հետ: Ինձ համար մեծագույն պատիվ եւ օրհնություն է անցնել այս թատրոնի միջանցքներով եւ փորձասրահներով, որտեղ խնամքով կախված են օպերային արվեստի տարբեր ժամանակների հին ու նոր տիտանների նկարները, ովքեր արարել են այդ բեմում եւ թողել իրենց էներգիան, ինչպես նաեւ երգել, վայելել այդ նույն բեմում կանգնելու բերկրանքն ու հանդիսատեսի ջերմ ընդունելությունը: Ես անչափ շնորհակալ եմ իմ Աստծուն եւ իհա՛րկե թատրոնի տնօրենությանը՝ ի դեմս **Պետեր Կատոնայի**, տարիների համագործակցության, բոլոր գեղեցիկ դերերի եւ տաղանդավոր արտիստների, լեգենդար ռեժիսորների եւ դիրիժորների հետ բեմը կիսելու, բացառիկ հանդիպումների եւ ծանոթությունների համար:

**-Ինչպե՞ս ընթացավ այս տարվա սեզոնը Արքայական թատրոնում եւ ինչպե՞ս ընդունեց հանդիսատեսը Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը» եւ հատկապես քո դերերգը՝ ի տարբերություն անցյալ տարվա «Օթելլոյի», որտեղ դու աննման էիր Դեզդեմոնայի՝ միանգամայն փխրուն եւ հզոր դերում:**

-Անհամեստություն թող չթվա, բայց անկեղծորեն պիտի նշեմ, որ 2016 թվականից մինչ այսօր Արքայական օպերայի բեմում կերտելով տարբեր գեղեցիկ կերպարներ՝ շատ ջերմ ընդունելության եմ արժանացել թե՛ հանդիսատեսի, թե՛ արտիստների, ե՛ւ թե տնօրենության կողմից: Թեպետ պիտի առանձնացնեմ անցյալ սեզոնի «Օթելլոն», որտեղ իմ Դեզդեմոնայի «Ավե Մարիա» արիայից հետո դահլիճում մի աննկարագրելի, արտակարգ ծափողջույններ եւ բրավոների բացականչություններ էին սկսվում, այնքան երկար եւ բարձր, որ Օթելլոյի մուտքը չէր լսվում: Բազում անգամներ եմ երգել Դեզդեմոնայի դերերգը, բայց անցյալ տարվա սեզոնը շատ տպավորիչ եւ հիշարժան էր: Լոնդոնի հանդիսատեսի որքա՞ն մասն է գիտակ կամ երաժշտասեր՝ չեմ կարող ասել, բայց համեմատած, օրինակ, Դրեզդենի Սեմպերօպերի, որտեղ երբեմն տուրիստների գերակշռության պատճառով զուսպ ընդունելության կարող եմ հանդիպել, անկախ կատարման որակից կամ անվանի արտիստների առկայությունից, Լոնդոնի Արքայական թատրոնում երբեւէ նման երեւույթի հետ չեմ առնչվել: Միշտ շատ ջերմ, բաց եւ անկեղծ է հանդիսատեսի ընդունելությունը այստեղ:

Իսկ թե ինչպես ընդունեց հանդիսատեսը Մոցարտի օպերան եւ իմ կերտած կոմսուհի Ալմավիվային՝ կասեի հետեւյալը... Այո՛, այս դերը երգել եմ 8-9 տարի առաջ՝ Նյուրնբերգի Ազգային օպերային թատրոնում՝ **Մարիամ Կլեմոյի** բեմադրությունում: Մեծագույն սիրով եմ երգում Մոցարտ: Իհա՛րկե, կան Մոցարտի իտալական եւ գերմանական մեկնաբանումներ: Դրանք տարբեր են իրենց ոճերով եւ պահանջում են առանձնահատուկ մոտեցումներ: Ես չեմ կարող ասել, թե ես «մոցարտյան» ձայն ունեմ, այն բարոկկո ոճ եւ հատուկ հնչեղություն ունի, ձայնի գույն եւ կատարողականություն, հատկապես գերմանականը: Բայց եւ այնպես, Մոցարտ երգելը գրեթե պարտադիր է, երկարացնում է ձայնի կյանքը, երիտասարդացնում, ինչո՞ւ չէ, նաեւ շատ «առողջարար» է, ինչպես մեզ համար Կոմիտաս երգելը: Հնարավոր է լինել ճանաչված, բարձունքների հասած երգիչ, բայց չկարողանալ Կոմիտաս երգել, ինչն ինքնին խոսում է սխալ հիմքերի մասին: Սրանք նշաձողեր եւ չափորոշիչներ են, որ դրվել են կոմպոզիտորների կողմից, որոնցով բացահայտվում են այս կամ այն վոկալ խնդիրները եւ կամ հակառակը: Պատահական չէ, որ տվյալ դեպքում Մոցարտի ստեղծագործությունները պարտադիր են ուսանողության սկսնակ տարիներին եւ մրցույթներին, քանի որ բացահայտում են երգչի կարողությունները:

**-Վերդիի եւ Պուչինիի հանրահայտ դերերգերի հետ համեմատած, ինչպե՞ս ես քեզ զգում Մոցարտի օպերաներում եւ հատկապես ա՛յս օպերայում: Ինչպիսի՞ն են կոմսուհի Ալմավիվայի դերի քո մասնագիտական եւ էսթետիկ մոտեցումները:**

-Պիտի ասեմ, որ ես բելկանտո, վերիզմո ոճի եւ վաղ շրջանի վերդիական երգչուհի եմ, սակայն, իհարկե, Դրեզդենի օպերային թատրոնում մշտական պայմանագրով աշխատելու տարիներին գրեթե ամեն ինչ, ամեն ոճով երգել եմ, անգամ Վագներ: Երգել եմ նաեւ Մոցարտի «Գիշերային թագուհին» օպերայում եւ ամեն անգամ հաճույքով ընդունում եմ Մոցարտ երգելու առաջարկները: Այն կարծես ձայնալարերի, ձայնի «վերականգնողական կենտրոն» լինի, վերադարձ սկզբնակետին եւ ճշգրիտ երգեցողությանը: Եթե որոշ կոմպոզիտորների գործերում որոշակի կատարողական ազատություններ կարելի է թույլ տալ, ապա Մոցարտի մոտ դա չի աշխատում: Այս է պատճառը, որ շատ երգիչներ չեն սիրում Մոցարտ երգել, նա ճշգրիտ կատարողական սահմաններ ունի:

Ուրախ էի Մոցարտ եւ հատկապես այս օպերան երգելու նաեւ այն պատճառով, որ այն շատ հումորային է, եւ հնարավորություն ունեցա այս ոճում էլ հանդիսատեսին ներկայանալ: Իմ երգացանկում գերակշռում են մեծամասամբ դրամատիկ, զոհաբերվող, ողբերգական դերերը, սակայն ես միշտ հաճույքով մարմնավորել եմ նաեւ կատակերգական ոճի կերպարներ: Կոմսուհի Ալմավիվան ընդունված է ներկայացնել որպես ծանրակշիռ, տարիքով, տխուր, մի փոքր նաեւ «ձանձրալի» կեցվածքով, որին ես ի սկզբանե կտրականապես դեմ էի: Ռոզինան դեռ չարաճճի, երիտասարդ կին էր, բացի այդ նա որբ էր, արիստոկրատ ծագում չուներ, որն ամուսնանալով կոմս Ալմավիվայի հետ՝ ձեռք էր բերել անուն, տիտղոս, կարգավիճակ, բայց հոգում դեռ նույն աղջնակն էր մնացել: Ռեժիսոր Սըր Դեյվիդ Մըքվիքարի հետ քննարկեցինք իմ այս դիտարկումն ու համաձայնեցրինք, որ ես փոքր ինչ այլ կերպ ներկայանամ մինչ այս եղած Ռոզինաներից, այն է՝ ավելի զվարթ, երիտասարդ, չարաճճի եւ հումորով լի:

⇨ Դ

# Դավիթ Գալստյան. «Ես նույնպես ընտրեցի ամենափառահեղ մասնագիտությունը»

**ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ**

*ԵՐԵՎԱՆ - Երեւանի պարարվեստի պետական քոլեջը մեր քաղաքի իմ ամենասիրելի վայրերից է, որի տնօրենի առանձնասենյակը շնչում է բարձր գեղարվեստով ու ճաշակով: Անցած տարեվերջից այդ գողտրիկ սենյակում պաշտոնավարում է մեր լավագույն պարողներից մեկը՝* ***Դավիթ Գալստյանը****: Տակավին երիտասարդ (38-ամյա) եւ հմայիչ Դավիթը, մեր բալետի ականավոր արտիստներ, երջանկահիշատակ* ***Վիլեն Գալստյանի*** *եւ* ***Նադեժդա Դավթյանի*** *արժանավոր որդին, ուսանել է Երեւանի պարարվեստի ուսումնարանում եւ Լոնդոնի բալետի թագավորական դպրոցում (ավարտել է ոսկե մեդալով՝ երեք տարի շարունակ ճանաչվելով դպրոցի լավագույն աշակերտներից մեկը): 2004-2022 թթ. ընդգրկվել է Թուլուզի (Ֆրանսիա) «Կապիտոլի» պետական բալետի խմբում: Գլխավոր դերապարտերով հանդես է եկել մի շարք դասական եւ նոր դասական բալետներում, բազմիցս մասնակցել եվրոպական բալետի աստղերի գալա-համերգների, փառատոնների եւ հյուրախաղերով շրջագայել է աշխարհի բազմաթիվ երկրներում, նաեւ մասնակցել Երեւանի օպերայի եւ բալետի թատրոնի ներկայացումներին:*

**-Դավի՛թ, կես տարուց ավելի է, ինչ տնօրինում ես քո ալմա մատեր պարարվեստի քոլեջը: Ի՞նչ փոփոխություններ ես հասցրել կատարել:**

-Ամենակարեւորը՝ բեմադրվել է երկու նոր մեկ գործողությամբ բալետ, դասական երկացանկի ադամանդներից «Ռայմոնդայի» երրորդ գործողությունը եւ իմ հեղինակային «Վերադարձ արմատներին» բեմադրությունը՝ Քնուդագե Ռիիզագերի երաժշտությամբ: Քոլեջի բեմում ունեցանք երեք ներկայացում, տոմսերը գրեթե ամբողջովին վաճառվեցին. հանրությունը պահանջում էր ներկայացումները կրկնել, սակայն չարեցինք, քանի որ չենք ուզում դպրոցականներին ավելորդ ծանրաբեռնել: Այս տարի նշեցինք Արամ Խաչատրյանի 120-ամյակը, համագործակցեցինք օպերային եւ բալետի թատրոնի եւ Խաչատրյանի տուն-թանգարանի հետ, որը մեզ տրամադրեց կոմպոզիտորին պատկերող եզակի կինոկադրեր: Շատ լավ երեկո եղավ, դասական եւ ժողովրդական պարի բաժինները ներկայացրին **Վիլեն Գալստյանի, Նորայր Մեհրաբյանի** եւ **Վանուշ Խանամիրյանի**՝ խաչատրյանական բեմադրություններից: Նաեւ «Զարկ» հիմնադրամի համագործակցությամբ մեր օպերային եւ Գյումրիի դրամատիկական թատրոններում նշեցինք Ազատ Ղարիբյանի եւ Թերեզա Գրիգորյանի նույնպես 120-ամյա հոբելյանները: Իմ ցանկությունն է, որ մեր քոլեջը մաքսիմալ ակտիվ լինի նաեւ համայնքային միջոցառումներում եւ մարզերում: Ապրիլի 29-ին մասնակցել ենք նաեւ պարի միջազգային օրվա միջոցառմանը օպերայի եւ բալետի թատրոնի բեմում: Շատ եմ կարեւորում, որ մեր երեխաները կարողանան օգտվել մեծ բեմից, դա նրանց մոտիվացնում է, արթնացնում է նրանց մեջ այլ զգացմունքներ: Ծրագրեր շատ կան, ամեն ինչ կախված է ֆինանսավորումից...

**-Այս տարի նաեւ քոլեջի մոդեռն բաժինն ունեցավ իր առաջին շրջանավարտները: Մեծ հաճույքով դիտեցի ավարտական ներկայացումները՝ Արա Ասատուրյանի «Ասացվածք» եւ Ռիմա Պիպոյանի «Դիդոնե եւ Էնեաս» իսկապես ինքնատիպ բեմադրությունները, որոնք պատրաստի կարող են որեւէ թատրոնի երկացանկ մտնել...**

-Այո՛, մեր շրջանավարտները հիանալի տպավորություն թողեցին. պատրաստի պարախումբ են: Շատ եմ ափսոսում, որ մեր երկրում մինչ օրս չունենք մոդեռն պարի գործատու, համապատասխան թատրոն: Տաղանդավոր երիտասարդների այս ռեսուրսը, ցավոք, լիարժեք դրսեւորվելու տեղ չունի:

**-Իսկ եթե քոլեջո՞ւմ ստեղծվի նման թատրոն...**

-Քոլեջի առաքելության մեջ չի մտնում պարի խումբ ունենալը: Մեր նպատակն է՝ կրթել, պատրաստել աշխատունակ, մրցունակ, գրագետ, ժամանակակից շրջանավարտներ: Հրաշալի կլինի, եթե մի օր ունենանք քոլեջին կից երիտասարդական խումբ, ինչպես մոդեռն, այնպես էլ դասական, որը տրամպլին կհանդիսանա մեծ բեմ անցնելու համար...

**-Հուսանք, որ դա էլ կլինի: Քոլեջ մտնելով՝ նկատելի են նաեւ որոշակի տեխնիկական փոփոխություններ...**

-Մեր բեմում հիմա ունենք մասնագիտացված, շատ լավ որակի նոր հատակ. հնի վրա պարելը ռիսկային էր վնասվածքների համար: Ունեցանք նաեւ նոր ձեւավորված կուլիսներ, հետնավարագույր, աղջիկների համար ձեռք բերեցինք նոր **պաչկաներ**, տղաների համար՝ նոր **կոլետներ**: Բայց հատկապես շենքի ենթակառուցվածքների առումով շատ աշխատանք կա անելու:

**-Իսկ հիմա ամենաշատն ինչի՞ կարիք ունի քոլեջը...**

-Տղաների ընդունելության: Վերջին երեսուն տարիներին Հայաստանը եղել է միջազգային բալետին տղաներ «մատակարարող» երկիր. գիտենք, թե այս քոլեջից քանի՛ տաղանդավոր երիտասարդներ են աշխատանքի մեկնել տարբեր երկրներ (մեկն էլ՝ ես): Դեռ չավարտած՝ 15-16 երկրից մեզ հրավիրում էին ուսումն անվճար շարունակելու: Բայց հիմա այն խնդիրը, որ կար Եվրոպայում 30 տարի առաջ, վերջին հինգ տարիներին ունենք նաեւ մենք: Այդ պատճառով ամեն ինչ պիտի անենք, որ հանրության մեջ բալետի հանդեպ ձգտումը վերականգնվի: Ժողովրդական պարի բաժնում նման խնդիր չկա, նույնը մոդեռն բաժնում, սակայն այնտեղ ոչ մի տղա չկա: Ինձ տեղեկացրին, որ երկու տղա են բերել ընդունելության, ինչն արդեն հուսադրող է: Հիմա պայմանավորվածություն կա դպրոցների տնօրենների հետ, որ սեպտեմբերից սկսած, հին սովետական ժամանակների պես, գնանք դպրոցներն ու տղաների միջից հարմար թեկնածուներ ընտրենք բալետի համար: Պիտի հասնենք այն բանին, որ մեր քոլեջի համբավը երկրում այնքան բարձրանա, որ շատերը ձգտեն իրենց տղաներին բերել այստեղ: Պայմաններն արդեն իսկ լավ են, անվճար սնունդ ենք տրամադրում: ԿԳՄՍ նախարարությունը մեզ նաեւ աջակցում է տղաներին զինվորական ծառայության տարկետում տալու գործում:

**-Մտադիր չե՞ք դրսից նույնպես աշակերտություն գրավել...**

-Առայժմ ունենք մի աղջիկ Ճապոնիայից: Նա այնքան լավ էր աշխատում, որ ես չէի կարող նրան թողնել մեր ծրագրից դուրս ու ընդգրկեցի մեր վերջին երկու բեմադրություններում: Հաջորդ տարի կունենանք եւս երկու աշակերտուհի Ճապոնիայից:





**-Կարծում եմ՝ մեր քոլեջը կարող է դառնալ տարածաշրջանի բալետի լավագույն կրթօջախը:**

-Դա նպատակ է, որին պիտի հասնենք: Առաջին հերթին՝ մեր դասավանդողները պիտի վերապատրաստվեն: Հետո՝ պետք կլինի ներգրավել օպերային թատրոնի երիտասարդներին, որոնք իրենց կարիերայի վերջում են (ինչն արդեն անում ենք, քոլեջում դասավանդում են մեր բալետի մենակատարներ **Սեւակ Ավետիսյանը, Կարեն Մարտիրոսյանը**): Չեմ ուզում կարճ ժամանակով վարպետության դասեր կազմակերպել. այդ գործը պիտի լինի համակարգված, տարին երկու-երեք անգամ, որոշակի ծրագրով: Միայն այդպես կկարողանանք մեր մասնագետների որակավորումը բարձրացնել: Ինչո՞ւ ոչ, ժամանակ առ ժամանակ կարող ենք վարպետության դասեր էլ կազմակերպել, այս տարի **Արսեն Մեհրաբյանը** մեկ շաբաթ դասավանդեց, այդ կարճաժամկետ դասերն էլ կարեւոր են, բայց դա հարցի լուծում չէ: Եթե ուզում ենք մեզնից հետո լավ մասնագետներ ժառանգություն թողնել, դա պիտի լինի պետական աջակցությամբ, կարգավորված, ես էլ կարող եմ բերել լավագույն մասնագետներ, որպեսզի լինի առավելագույնս օգտակար:

**-Դավի՛թ, դու ավարտեցիր պարողի կարիերադ: Մի քիչ շուտ չէ՞ր: Դու դեռ հիանալի մարզավիճակում ես...**

-Տարիքային առումով միգուցե շուտ էր: Բայց, անկեղծ ասած, քսան տարի բեմում էի եւ հագեցել էի: Իմ բոլոր երազանքները, նպատակները, ցանկություններն իրականացրել էի: Կար նաեւ մի մեծ գործոն. հայրս վատառողջ էր, այդ պատճառով թողեցի ամեն ինչ ու վերադարձա, որ լինեմ նրա կողքին: Միեւնույն ժամանակ, անգործ մնալն էլ անհնար էր: Իմացա, որ քոլեջի տնօրենի հաստիքը թափուր է, երեք ամիս սովորեցի ու ստացա արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման հավաստագիր: Ինձ մեծապես օգնեց Ուսուցման ազգային հիմնադրամի տնօրեն **Մարինե Հակոբյանը**, որի շնորհիվ կարողացա հաղթահարել քննությունները եւ ձեռք բերել կառավարման հավաստագիրը:

Ասեմ, որ իմ ամենավերջին ելույթը՝ Նիժինսկիի «Ֆավնի հետկեսօրյա հանգիստը» հայտնի համարը, որ կայացավ Թուլուզում, զգացմունքային առումով շատ բարդ էր: Ներկայացումից առաջ կուլիսում նստած՝ քսան տարիներն անցնում էին աչքիս առաջ, ու դեռ դրանից հետո պետք էր կենտրոնանալ ու դուրս գալ բեմ՝ վերջին ելույթս ներկայացնելու հանդիսատեսին... Ինչեւէ, այդ մի էջն էլ փակվեց...

**-Եվ դու նոր էջ բացեցիր՝ այս տարի հանդես գալով որպես բալետմայստեր: Ի՞նչ ես կարծում, կշարունակե՞ս բեմադրել...**

-Անկեղծ ասած՝ բեմադրելու ամբիցիա չեմ ունեցել, բայց արեցի՝ ելնելով անհրաժեշտությունից, աշակերտներիս ոգեւորությունից, ու կարծես թե հաջողվեց: Երեք ներկայացումն էլ շատ լավ արձագանքներ ունեցան: Կարծում եմ՝ կշարունակեմ, այո՛, եւ որոշել եմ մնալ հենց բուն դասականի ու նոր դասականի ժանրում: Թեեւ ժամանակակից բալետին էլ վատ չեմ տիրապետում, աշխատել եմ համաշխարհային գիգանտ խորեոգրաֆների հետ՝ Կիլիան, Ֆորսայթ, Նոյմայեր, Դուատո եւ ուրիշներ, բայց քանի որ մեր գործատուն օպերայի եւ բալետի թատրոնն է, իսկ մենք՝ իր բալետային խմբի երաշխավորը, շատ կարեւոր է, որ կատարեմ դասական բալետի բեմադրություններ:

**-Կարող ենք ասել, որ դու մի շատ լավ հանգրվանի ես հասել քո կարիերայում: Իսկ անձնակա՞ն կյանքում...**

-Ընթացքում է, Արծվի՛ ջան: Աստվա՛ծ առաջ...

**-Դանիացի ականավոր պարող եւ բալետմայստեր Ավգուստ Բուռնոնվիլն ասել է. «Ես ընտրեցի բոլոր մասնագիտություններից ամենափառահեղը»: Դու կարո՞ղ ես կրկնել նույն խոսքերը...**

-Բացարձակապես համաձայն եմ նրա հետ: Ես նույնպես ընտրեցի ամենափառահեղ մասնագիտությունը: Երբեւիցե չեմ զղջացել, որ այդ ճանապարհն եմ անցել: Մեծացած լինելով բալետային ընտանիքում՝ պարարվեստը միշտ շատ եմ սիրել: Այսօր էլ նույնը շատ մեծ սիրով փոխանցում եմ մեր քոլեջի տաղանդաշատ աշակերտներին: Իմ այս նոր կարգավիճակը նույնպես շատ սրտովս է, ինչպես ասացի՝ շատ բան կա անելու: Պատասխանատվությունն ահռելի է, բայց ես պատրաստ եմ անել առավելագույնը...

**-Դավի՛թ ջան, թույլ տուր վերջում մեծ գոհունակությամբ նշել, որ ինձ հաճելիորեն զարմացրեց ու հիացրեց քո գրագետ գրական հայերենը: Տեսնում եմ, որ չնայած ապրել ես արտերկրում, 2007 թվականի մեր առաջին հարցազրույցից ի վեր խոսակցական լեզուդ առաջադիմել է...**

-Անկեղծ ասած՝ երբ նոր էի եկել, խոսելիս մի փոքր կաշկանդվում էի: 15 տարեկանից դրսում եմ եղել, տարին մի անգամ հինգ օրով գալիս էի Երեւան, ծնողներիս համբուրում, գնում էի հետ: Բայց ութ ամիս է, ինչ Երեւանում եմ ապրում, ողջ օրը փաստաթղթերի, գրքերի, հայերեն տերմինների մեջ եմ եւ հաղորդակցվում եմ հայերենով...

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# Քրիստինե Չթչյանի մենահամերգը

Ամեն կայացած երաժշտի հատուկ է կատարման յուրահատուկ ոճը, նվագելաձեւը, երաժշտական երկերի մեկնության սեփական կերպը, որոնք անձնական ապրումի եւ անհատի խառնվածքի դրսեւորման արտահայտություն են: Շուրջ տասը տարի հետեւելով ջութակահար **Քրիստինե Չթչյանի** կատարողական ընթացքին, ներկա լինելով նրա մենահամերգներին՝ քանիցս համոզվել եմ, որ հայ ջութակահարների դպրոցի լավագույն ավանդույթները շարունակողների շարքում է, եւ նրա՝ վերջերս կայացած երեւանյան մենահամերգը դրա ապացույցներից մեկն էր:

Հնագույն երաժշտության «**Տաղարան**» համույթի առաջին ջութակի եւ կոնցերտմայստերի հետ ծանոթությունս, որքան էլ զարմանալի թվա, եղել է «Երիտասարդ առաջնորդների» դպրոցում, որտեղ տարբեր հասարակական կառույցների երիտասարդ ներկայացուցիչներին առաջնորդության հմտություններ էին հաղորդում: Նրա արթուն միտքը եւ հուզական, ոչ անտարբեր բնույթը դրդել էին առավել ակտիվ մասնակցություն ունենալու հասարակական կյանքին, բայց դարձյալ իր երաժշտությամբ, երբ ներքին դրդումն այնքան հզոր էր եղել, որ այդ համեստ, զգայուն, զուսպ, բավական ներփակ մարդն արդարության ձայնը լսելի դարձնելու համար Ազատության հրապարակում հավաքված մարդկանց կողքով անցնելիս՝ քայլերը դանդաղեցրել, երկար կանգնել էր, ապա բացել էր ջութակի պատյանը, եւ գործիքն առնելով ձեռքը, նվագել՝ առավել խոսուն արտահայտելով այն, ինչը տեղ չի հասնում, երբ բառերով ես ձեւակերպում: Մի տասնամյակ առաջ Երեւանի սրտում այս ինքնաբուխ մենահամերգը Քրիստինեի, թերեւս, միակ նշանակալից քայլն է քաղաքականության մեջ: Տարիները Քրիստինեին համոզել են, որ յուրաքանչյուրն ի՛ր տեղում, ի՛ր մասնագիտության ոլորտում ազնվորեն ջանալով՝ ավելին է կարող անել, քան եթե ձեռք մեկնի իր բնույթին ոչ հատուկ ոլորտներին, ուստի գլխավորը, ավելին՝ միա՛կն իր կյանքում երաժշտությունն է, չմոռանանք նաեւ՝ դասավանդումը, նվիրումն իր մանկահասակ աշակերտներին:

Բավական է բեմ բարձրանա, կտրուկ վերափոխվում է. մենահամերգի ժամանակ ներփակվում է, ասես՝ անցնում իր ներսը, իմ տպավորությամբ, դառնում՝ կարծես ջութակի ձգված լար, ամբողջանալով իր կատարած երաժշտության հետ՝ վերանում իրականությունից: Այդպիսին է հանդիսականը տեսնել նրան նաեւ անցյալ տարվա հունիսին Վլադիկավկազում իր ելույթների ժամանակ: Այդ համերգներն անցան Ալանիայի՝ Քրիստոնեության ընդունման 1100-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում: Վլադիկավկազի սիմֆոնիկ նվագախմբի հետ (դիրիժոր՝ **Վալերի Խլեբնիկով**) տեղի Մարինյան թատրոնի դահլիճում Ք. Չթչյանը նվագեց **Արամ Խաչատրյանի** ջութակի կոնցերտը: Նույն դահլիճում, ապա եւ Կրասնոդարում, Նովոռոսիյսկում անվանի դաշնակահար **Ալեքսանդր Յակովլեւի** հետ կատարեց **Բրամսի**, **Սարասատեի**, **Բաբաջանյանի**, **Կոմիտասի** ստեղծագործությունները:



*«Տաղարան» համույթի առաջին ջութակ Քրիստինե Չթչյան*



***Քրիստինե Չթչյանը՝ Վլադիկավկազում՝ Մարինյան թատրոնի մասնաճյուղում համերգին, անվանի դիրիժոր, ՌԴ վաստակավոր արտիստ Վալերի Խլեբնիկովի հետ***

Քրիստինեի երեւանյան մենահամերգներից այս տարիներին առանձնապես տպավորվել են ելույթները Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում, մաեստրո **Սեդրակ Երկանյանի** նվագակցությամբ համերգները, նվագը «**Հայֆրիս**» եռյակի կազմում, 2021-ի աշնանն ու 2022-ի ձմռանը՝ զուգանվագները Հայաստան ժամանած Ալ. Յակովլեւի հետ: Վերջինիս հետ միջազգային մրցույթների դափնեկիր Քր. Չթչյանի ռուսաստանյան համերգները բարձր գնահատական ստացան թե՛ տեղի հանդիսականի, թե՛ երաժշտագետների կողմից: Ահա թե ինչու նա հրավիրվեց վարպետության դասեր տալու Կրասնոդարում: «Հպարտ եմ, որ հինավուրց երկրիս մի մասնիկն եմ եւ հնարավորություն ունեմ օտարներին ներկայացնելու մեր հայկական հարուստ մշակույթը,- այդ օրերին կարճ գրառում կատարեց Քրիստինեն:- Երաժշտությունն ազգություն չունի, եւ երաժշտության լեզուն բարությունն ու խաղաղությունն է: Լսելով մեր հանճարեղ Կոմիտասին՝ ամբողջ դահլիճը հուզվեց... Ինձ համար մեծ պատիվ է, որ կարող եմ երաժշտության միջոցով օտարներին լսելի դարձնել հայ ժողովրդի հազարամյակների պատմությունը»:

Հավելենք, որ անցյալ տարեվերջին Քրիստինե Չթչյանը Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում կայացած «Golden Time Talent» միջազգային մրցույթում արժանացել է պատվավոր առաջին մրցանակին՝ ոսկե մեդալի՝ լարային գործիքներ անվանակարգում:



***Սեդրակ Երկանյան, Քրիստինե Չթչյան. երեւանյան մենահամերգ***

Եվ ահա սպասված մենահամերգը՝ Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը: Նրանում ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Սեդրակ Երկանյանի դաշնամուրային նվագակցությամբ հնչեցին երկու հայաստանյան պրեմիերաներ՝ Պ. Սարասատեի՝ կոնցերտային ֆանտազիան՝ **Շ. Գունոյի** «Ռոմեո եւ Ջուլիետ» օպերայի թեմաներով եւ **Սինժելեի** ֆանտազիան՝ **Ջ. Վերդիի** «Տրավիատա» օպերայի թեմաներով: Այս համերգը, եթե երկու բառով գեղարվեստորեն նկարագրելու լինենք, կարելի է ձեւակերպել՝ իբրեւ զգացմունքների ալեկոծություն. տրամադրությունների ելեւէջումներ, վերելքներ ու վայրէջքներ՝ սուր դրամատիզմից մինչեւ հանդարտ մեղեդային անրջանք, ընդվզումից մինչեւ մենության դատապարտվածության խորը զգացում, ողբերգության խորխորատներից մինչեւ ցնծության բարձրակետեր, որոնք ունկնդրին ինքնաբերաբար համակում էին այդ տարամերժ տրամադրություններով: Կատարումից կատարում, հեղինակից հեղինակ, երկից երկ, դրանց ներդաշնակ՝ դահլիճը շնչում էր, տարուբերվում բազմաբղետ զգացմունքների ալեկոծությունում՝ մեղեդային, խորքային, լեցուն, բազմաշերտ:

Բեմին ու հանդիսասրահում նույն մթնոլորտն էր, նույն էներգետիկ դաշտը, եւ դա շնորհիվ **Ֆ. Պուլենկի** սոնատի, **Ա. Շնիտկեի**՝ հնագույն ոճով սյուիտի եւ **Սարասատեի**՝ իսպանական պարի թեմաներով «Պլայերա»-ի հուզական, արտիստիկ, կրքոտ, հոգեկան ուժերի գերլարում պահանջող կատարումների: Երաժշտական հանրահայտ երկերի կատարումներն ունկնդրելիս՝ դառնում ես ավելի բծախնդիր՝ հիշողությանդ մեջ իբրեւ չափորոշիչ ունենալով հայտնի ջութակահարների օրինակը: Սարասատեի, Պուլենկի, մյուսների ստեղծագործությունները Ք. Չթչյանը կատարեց մի շնչով, վերացած, զգացմունքների գերլարվածությամբ:

Հոգեկան ապրումների նկարագիրը տալ երաժշտության միջոցով այնպես, որ ուղղակի տառապանքի զգացումով համակես ունկնդրին,- դա հազվագյուտ արտիստներին է հաջողվում: Իմ տպավորությամբ, զգացմունքների խտացվածության իմաստով, համերգային ամենալեցուն պահերից մեկը **Չիպրիան Պորումբեսկուի** «**Բալլադ**»-ի կատարումն էր: 19-րդ դարի ռումինացի հանրաճանաչ կոմպոզիտոր Չ. Պորումբեսկուն՝ ուղղափառ եկեղեցու քահանայի որդին, հայտնի է եղել իր հանրային ակտիվ գործունեությամբ (համահիմնադիրն էր ազգային-հայրենասիրական կազմակերպության, ղեկավարել է ուսանողական եւ բանվորական երգչախմբեր, հրապարակել «Սոցիալական երգերի ժողովածու՝ ռումինացի ուսանողների համար»): Նրա ստեղծագործությունները՝ մեղեդային, վառ արտահայտված ազգային կոլորիտով, տոգորուն էին պայքարի ոգով, նաեւ խորը թախծությամբ, երբ երաժշտության լեզվով պատմում էր քաղաքական կալանավորների տանջանքի եւ անկոտրուն ոգու մասին: Առանձին դրամատիզմ ունի «Բալլադը»: Այն նաեւ անձնական ողբերգության արտահայտություն է. կոմպոզիտորն ապրել է ընդամենը 29 տարի եւ վախճանվել ծանր հիվանդությունից՝ թոքախտից: Այդ երաժշտությունը կարոտ է ու ցավ, մենությանը շղթայված հոգու կանչ, բանտվածի տոչորում: Անելանելիությունից զարկ է պատեպատ, տարածությունից տարածություն, ընդվզում, հոգեմաշ տենչանք... Որպես այդ մեղեդուն համանվագ են ծնվել բանաստեղծական տողերս.

*Հույսեր հանգչեցան խանձարուրներում,*
*Եվ թեւակոտոր թռչունքը անկան,*
*Եվ ես չեմ ուզում նույն շրջանն անցնել*
*Պատառված հոգով՝ ցնոր ու անհաշ:*

*Ո՜հ, երանի՜ է միամիտներին,*
*Որ չեն համտեսել դավ ու մոռացում,*
*Հիասթափության խարանը կրծքին՝*
*Չեն խաչվել նորեն հուդայի ձեռքով:*

*Չեն իմաստնացել մինչ աքլորականչ՝*
*Ճաշակելով սուտ, դավ եւ ուրացում,*
*Եվ ամբոխների ետդարձի ճամփին*
*Ոտնակոխ եղած վերադարձել տուն...*

*Ես լուսումութին արմունկդ եմ փնտրում,*
*Որ չսայթաքեմ, չբեկվեմ, եւ արդ*
*Քո շնչին մոտիկ պահ մը լինելուց*
*Ոչինչ հրճվալի առավել չկա...*

# Լուսեղեն Հրաչուհի Բասենցը Լոնդոնի Արքայական Օպերայի բեմում

Այս մոտեցումն, իրոք, ավելի լավ ընդունվեց, շատերն էին հաստատում, որ վերջապես առաջին անգամ համակրանքով լցվեցին կոմսուհու հանդեպ, հասկանալի դարձավ նրա կերպարը, եւ, որ առաջին անգամ ձանձրալի չէր: Սա, իհարկե, ինձ համար ամենամեծ գնահատականն է եւ լավագույն ընդունելությունը:

**-Ի՞նչ է քո կարծիքը բնական, աստվածատուր տվյալների, երաժշտական, դերասանական եւ որեւէ տաղանդի եւ աշխատասիրության միջեւ: Այս եզակի արժանիքները Աստծո տվա՞ծ են, թե՞ ձեռքբերովի:**

-Ես միշտ եղել եւ մնում եմ այն կարծիքին, որ Գեղեցիկն Աստվածային է: Չարն ի վիճակի չէ Գեղեցիկ արարել: Իսկ արվեստագետը մշտապես արարում է, ստեղծում, ընծայում Գեղեցիկը: Ես նաեւ խորապես համոզված եմ, որ երգիչ, նկարիչ, դերասան չեն դառնում, այլ ծնվում են... Այդ աստվածային շնորհի, պարգեւի մեջ մի յուրահատկություն կա, մոգական մի ուժ, այն է՝ հպվել հանդիսատեսի սրտին, թակել հոգու դռները եւ բժշկել, սովորեցնել սիրել, ոգեշնչել, եւ դա հնարավոր է միայն, եթե դա ի վերուստ տրված է եւ անկեղծ է: Շատ եմ լսում միտք այն մասին, թե շատ ու շատ վարպետ կատարողներ, տաղանդավոր արտիստներ կյանքում շատ վատ մարդիկ են... Ես այդ համոզմանը դեմ եմ եւ հավատացած եմ, որ էգոիստ, ինքնամեծար անձինք ճիշտ ուղերձներ չունեն, ի վիճակի չեն մեծ զոհողության եւ մեծ արվեստ կերտելու: Ճշմարիտ արվեստագետները զուտ են ու ինքնազոհաբերվող: Հնարավոր չէ վատը լինել եւ բարձր արվեստ ստեղծել, այդ անձը չի հուզի, չի բժշկի, որովհետեւ նա անկեղծ չէ... Ինչով լցված ես, այդ էլ դուրս է հորդելու քեզանից, եւ բեմը դա շատ պարզ ցույց է տալու...





Հարցի հաջորդ մասին անդրադառնալով ասեմ, որ աշխատասիրությունն անչափ կարեւոր գործոն է մասնագիտական բարձունքներին հասնելու համար, բայց եւ այնպես, ինչպես միայն աշխատանքով, այնպես էլ միայն տաղանդով հնարավոր չէ հաջողություններ գրանցել: Ինչպես աստվածաշնչյան հայտնի օրինակում է ասվում. «Ծառաներին տերը տաղանդներ է բաժանում եւ հրահանգում է խնամքով պահել այդ տաղանդները եւ վերադառնալիս միայն այն ծառային է հավատարիմ բարի ծառա կոչում, որն ավելացրել, ծաղկեցրել, բազմապատկել էր տվածը»: Սա մի ամբողջական համակարգ է, մի հարուստ փաթեթ, որտեղ մեկն առանց մյուսի չի աշխատում, որտեղ և՛ մեկը, և՛ մյուսը շղթայաբար իրար հաջորդում են: Եթե սա ըմբռնենք՝ ամեն բան ճիշտ ժամանակին ճիշտ տեղում կլինի եւ կտա սպասված պտուղները:

**-Հրաչուհի՛, բազմաթիվ օժտված արվեստագետներ, երգիչներ այդպես էլ անկարող են լինում հասնել կատարողական կատարելության եւ ճանաչման: Որտե՞ղ է հաջողության հասնելու գաղտնիքը:**

-Աշխատասիրությունը բերում է վարպետություն, իսկ վարպետությունը՝ ինքնատիրապետում: Պատմության մեջ շատ կան բնատուր տվյալներով, բայց ոչ վարպետ կատարողներ, ովքեր չեն կարողացել իրենց բեմում տիրապետել եւ հաղթահարել իրենց վախերը, կորել են պատմության էջերում:

Բեմական, կատարողական արվեստը մարտի դաժան դաշտ է, որտեղ պետք է կանգնես ոտքից գլուխ զինված, հարյուր տոկոսով պատրաստված՝ պատերազմելու տարբեր դեւերի դեմ, եւ, եթե կան թույլ տեղեր, կամ վախեր, ապա համոզվա՛ծ եղեք, հենց դրանք էլ դառնալու են խոցվելու նշանակետերը: Բեմն ուժեղների, հոգեպես կայունների համար է (քանի որ շատերը հաջողությունից կորցնում են գլուխներն ու մարդկային արժեքները), եւ հավատացնում եմ՝ բեմը բարի մարդկանց տեղն է: Ինչո՞վ են տարբերվում ճշմարիտ արվեստագետն ու շինծուն.նրանով, որ ճշմարիտը ծառայում է իրեն տաղանդ նվիրողին, իսկ շինծուն՝ ինքն իր անձին... Բեմը մի զարմանահրաշ վայր է, որտեղ ամեն բան խոշորանում է՝ և՛ լավը, և՛ վատը, և՛ ինքնասիրահարվածությունը, և՛ համեստությունը, և՛ անսրտությունը, և՛ բարությունը...

Իսկ հանդիսատեսն ինչքան էլ գիտակ չլինի, մասնագիտական առումով չհասկանա, բայց էմոցիոնալ դաշտով նրան չես խաբի, չես ստիպի սիրել... Սա է պատճառը, որ որոշ երաժիշտներ, որ կարծես շատ պատրաստված են եւ ամեն բան ճիշտ են անում, բայց անկարող են լինում հուզել: Իսկ մյուս արվեստագետն ականջ է շոյում ու սրտեր գրավում իր ազնիվ հոգով եւ գունեղ ձայներանգով...

**-Սիրելի՛ Հրաչուհի, կցանկանայի նշեիր Քովենթ Գարդենում քո գալիք ծրագրերի մասին: Ե՞րբ լոնդոնյան երկրպագուները կրկին կվայելեն քո ելույթները:**

-Միշտ մեծագույն ոգեւորությամբ եմ վերադառնում իմ սիրելի Արքայական թատրոն եւ այս անգամ էլ ուրախ եմ, որ պատիվ ունեմ հաջորդ տարվա երաժշտական սեզոնին ներկայանալու իմ ամենասիրելի կերպարներով՝ Չիո-Չիո Սան (Պուչինիի «Մադամ Բաթերֆլայ») եւ Վիոլետտա Վալերի (Վերդիի «Տրավիատա»)...

*Ոգեւորությունս անսահման է, ինչպիսի՜ դերեր... Լոնդոնի բազմահազար օպերայի երկրպագուները, ինչպես նաեւ հայ երաժշտասեր հանրությունը (որը, ցավով պիտի նշել, շատ սակավաթիվ է) մեծագույն ուրախությամբ կսպասեն լուսեղեն ու բարի հայ սոպրանո Հրաչուհի Բասենցի վերադարձին՝ իր գունագեղ ու պատմական ելույթներով կրկին զարդարելու Քովենթ Գարդենի Արքայական թատրոնի բեմը...*

Իմաստաբանական բառարան

## Տոն, թե՞ զոհաբերություն

Հայաստանում տոն է լինելու, տոն ու ցնծություն, որին առաջադեմ մարդիկ հատուկ ջերմեռանդությամբ են սպասում: Հայաստանցիների առավել աչքաբաց զանգվածն ու տոնախմբությանը մասնակցելու անհագ տենչով հեռո՜ւ հեռուներից Հայաստան շտապող մարդիկ պատրաստվում են ընդառաջ գնալ Snoop Dogg-ի երանավետ գալստյանն ու նրա հոգեցունց համերգին: Հայաստանում տոն է լինելու, ցնցող տոն:

Մենք էլ ընդառաջ գնալով մեր հոգու խորքերը սողոսկող այս հոգեպարար տոնին՝ ներկայացնում ենք ՏՈՆ բառի ստուգաբանությունն, ըստ մեծանուն հայագետ **Հր. Աճառյանի**:

«Հասարակաց հանդես եւ հանդիսավոր օր» իմաստներով հայերենում կիրառության մեջ մտած ՏՈՆ բառը նախապես նշանակել է «զոհ, զոհաբերություն, ողջակիզում...», որը մեզ է ավանդվել հնդեվրոպական նախալեզվի dapni ձեւից (բոլորովին կապ չունի հին հունարենից փոխառյալ անհայտ ծագումով հայերեն ԴԱՓՆԻ բառի հետ): ՏՈՆ ու ԶՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ բառերի նույնիմաստ լինելու փաստն ապացուցելու համար Աճառյանն առաջարկել է հայերեն բառը համեմատել հին իսլանդերեն «զոհաբերության անասուն, զոհ, ողջակեզ» իմաստներով tafn, ինչպես նաեւ լատիներեն «աստվածներին նվիրաբերված զոհ» նշանակությամբ նույնարմատ pads, dapes բառերի հետ:

Տոն է լինելու, ցնցող տոն:

Հայերի ու իրանցիների լեզվամտածողության ընդհանրություններով պայմանավորված, ՏՈՆ իմաստով պարսկերեն bazm բառը նախապես «գինարբուք» է նշանակել, սակայն հնում գինու փոխարեն խնջույքին ԶՈՀԱԲԵՐՎԱԾ եզան արյուն են մատուցել:

Ու մենք շուտով ընդառաջ ենք գնալու մեծ գինարբուքին, որի մատռվակն է մեծն շոումեն Snoop Dogg-ը:

Տոն է լինելու, ցնցո՛ղ տոն:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

## Թեքեյան մշակութային միության Դոկտոր Նուբար Բերբերյան հիմնադրամի ամենամյա մրցանակաբաշխություն



Մտավորական, լրագրող, ակտիվիստ եւ ՌԱԿ բազմաթիվ ամսագրերի շուրջ կեսդարյա խմբագիր դոկտոր Նուբար Բերբերյանի 2023-ի ամենամյա մրցանակաբաշխությանը դիմելու մեկնարկը տրված է:

Նուբար Բերբերյանի մրցանակը տրվում է հայկական ծագում ունեցող ուսանողներին, որոնք մասնագիտանում են միջազգային իրավունքի կամ քաղաքագիտության մեջ:

Մրցանակաբաշխությունը սահմանվել է մտավորականի կտակի համաձայն, իսկ Բերբերյանը կյանքից հեռացել է 2016 թ.նոյեմբերի 23-ին 94 տարեկան հասակում:

***Մրցանակաբաշխությանը մասնակցելու պահանջներն են՝***

1) Կարող են մասնակցել ուսումնական հաստատությունների՝ հայկական ծագում ունեցող ուսանողները, որոնք գլխավորապես մասնագիտացած են կա՛մ միջազգային իրավունքի, կա՛մ քաղաքագիտության մեջ:

2) Դիմորդը պետք է ամբողջական դրույքով ներգրավված լինի ողջ աշխարհի հավատարմագրված քոլեջների կամ համալսարանների բակալավրիատի կամ ասպիրանտուրայի ծրագրերում:

3) Դիմորդը պետք է ներկայացնի ողջ տեղեկատվությունը, որը սահմանված է դիմումի ձեւում:

4) Դիմորդը պետք է ներկայացնի քոլեջի գրագրի պատճենը:

5) Դիմորդը պետք է ներկայացնի դիմանկար:

6) Դիմումը հնարավոր է ստանալ Tcadirector@Aol.com էլեկտրոնային փոստին գրված նամակի միջոցով:

7) Դիմորդները պետք է դիմումները ներկայացնեն էլեկտրոնային տարբերակով՝ ուղարկելով Tcadirector@Aol.com հասցեով:

8) Հայտերի ընդունման վերջնաժամկետը 2023 թվականի սեպտեմբերի 30-ն է:

9) Հիմնադրամի ադմինիստրատորները եւ կառավարիչները 2023 թ. հոկտեմբերին կքվեարկեն որակավորված հաղթողների օգտին՝ հաշվի առնելով յուրաքանչյուր դիմումատուին ներկայացրած դիմումը:

10) Հաղթողը կամ հաղթողները կստանան իրենց մրցանակները 2023 թ. նոյեմբերին:

11) Հաղթողները իրավասու չեն կրկին դիմել մրցանակի համար:

Ուոթրթաուն, Մ.Ա.

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

# Գյուղոլորտը՝ ավաղ-ի ենթակայությունում



Վերջին՝ ընդամենը մի քանի տասնամյակներին Երկիր մոլորակի չորս կողմերում ծավալվող իրադարձությունները շատ հաճախ այնպիսիք էին, որ մարդիկ դրանք աննախադեպ էին որակում, անհավատալի գնահատում, անգամ աներեւակայելի հայտարարում: Դրանք ի հայտ էին գալիս մարդկային կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, անկախ այն իրագործողների սոցիալական կարգավիճակից, կրոնական ու մաշկի գունային պատկանելիությունից: Մարդիկ խնդիր դիտարկեցին շրջակա միջավայրի հեռանկարային կառավարումը, արեւի էներգիայից օգտվելը, հեռակապի հնարավորությունների բազմազանեցումը, խաղաղ գոյակցելու շանսերը... Թե ինչքանով Հայաստանը, հանձին երեք տասնամյակից ավելի գոյատեւող Հայաստանի Հանրապետության կարողացավ տեղավորվել հիշյալ գործընթացներում, կարձանագրեն ոլորտային մասնագետները, որոնցից ոմանք առանձնացնում են աստղագիտությունից մինչեւ շախմատային երեւույթը, մաթեմատիկական օլիմպիադաներում հաղթանակներն ու մարզա-մշակութային նվաճումները: Բայց ոչ երբեք՝ հայաստանաբնակների առօրյայում սոցիալտնտեսական ցանկալի բարեփոխումները, ասենք՝ աղբ համարվողը բազմաբնույթ հումք համարելը կամ մարդկանց տեղաշարժը հիմնավորապես կանոնակարգելը: Երբեւէ լսած չկանք, չէ՞, որ խոսվի Երեւան-Սեւանա լիճ հիմնական հանգստի գոտի ու զբոսաշրջային հատվածը քառորդ ժամում, որը 15 րոպեն է, գերժամանակակից տրանսպորտային միջոցով անցնելու հնարավորության ստեղծումից: Աղբն այրելով էներգիա ստանալը կամ 400 կմ/ժամ արագությամբ շարժով էլեկտրագնացքներն ամենուր հանդիպող փոխադրամիջոցներ են, միայն ոչ՝ հայտերիս երկրում, որը նաեւ պետություն է կոչվում: Նման պահերին մեր հայրենակիցները տարակուսում են, թե ինչերից է խոսվում, երբ հողա-ջրա-ջերմային լավագույն պայմանների առկայության պարագայում, ներառյալ փորձառու աշխատուժը, Հայաստանի հանրապետությունում չի իրականացվում սեփական հացի հումք ցորենն արտադրելը, ընդամենը 500-600 հազար տոննա ծավալով, որն իրագործելի է ՀՀ վարելահողային ռեսուրսի հազիվ 20 տոկոսի վրա: Ասել, թե փորձ չի արվում լուծել այն, տեղին չի լինի. ցորենի սերմեր ներմուծողներին արտոնություններ են տրվում, սահմանվում են սուբսիդավորման կանոնակարգեր, վարկեր ու գրանտներ են առաջարկվում, հողերը ջրելու վճարներում են օգնում, արդյո՞ւնքը թե հետեւա՞նքը... ՀՀ վարչապետի պժգոհությունն է պետական ապարատից, ամենատարբեր պատճառներով: Ստուգող ու վերահսկող, վերլուծող ու պատժող կառույցների պակաս էլ իշխանությունը չունի, որոնք ղեկավարում են իր թիմի անդամներն ու երդվյալ համակիրները: Իրենց օգնությունն են առաջարկում տպագիր ու էլեկտրոնային մամուլը, գործադիրից ու իշխանությունից դուրս գտնվող մասնագիտական կադրերը, միջազգային կառույցները: Հետեւա՞նքը թե արդյո՞ւնքը: Հենց միայն գյուղոլորտի հիմնական նպատակ հացահատիկի արտադրությունում 2000-ականների սկզբի մինչեւ 450 հազար տոննա արտադրության դիմաց 2022-ին արձանագրվել է 138 հազար տոննա բերք, հազիվ թե ընդամենը 30 տոկոսը: *Ինչո՞ւ* հարցով լրագրողական տիրույթում հայտնված պատասխանատու պաշտոնյաներին դիմելու փոխարեն մեր գործընկերները սովորականից հաճախ են մտահոգվում, թե ծիրան կունե՞նք արդյոք կամ ի՞նչքան կկազմի խաղողի համախառն բերքը, կավելանա՞ արդյոք 2022-ին արտահանված 254 հազար ավտոմեքենաների քանակը 2023-ին, կունենա՞նք արդյոք աշխատատեղերի աճի նոր ռեկորդ...

Համանման հարցադրման հնարավորությունից օգտվելով օրեր առաջ հետեւյալ հարցով գրավոր դիմեցի ՀՀ էկոնոմիկայի նախարար **Վ. Քերոբյանին**. «Կարիքն առաջանալու կապակցությամբ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն 2022թ-ին ՀՀ-ում ցորենի եւ հատիկի նպատակով եգիպտացորենի աճեցման ցանքատարածությունների վերաբերյալ. մինչեւ 0.5 հեկտար, 1-5 հա, 5-10 հա, 10-20 հա, մինչեւ 50-100 հա, նշելով մշակաբույսերի միջին բերքատվությունը»: ՀՀ վարչապետի կողմից որոշակի դրվատանքի արժանացած քաղաքացիներից մեկը լինելով, ով նաեւ ակտիվ լրագրությամբ է զբաղվում, ցանկանում էի նախարարության մասնագիտական պատասխանի մեջ փնտրել ու գտնել հատկապես այն տարածքները, որոնցում առավել արդյունավետ գյուղգործունեություն է իրականացվում: Մի բան է փոքր տարածքում գյուղտեխնիկայի ու մեխանիզատորի աշխատանքն ու վճարը, այլ բան՝ 50, 100, 200 հեկտարի պարագայում աշխատելն ու ակնկալիքը: Արդյունքում՝ միջին հեկտարից շահույթ հաշվառելիս մասնագետ ներկայացնող այրերը ցորենի պարագայում արձանագրում են 150 հազար դրամ շահույթ, մրգի ու բանջարեղենի դեպքում՝ 2 մլն դրամի շահույթ: Սակայն ինչ-ինչ շարժառիթով չի ասվում, որ արդեն հիշատակված 50, 100, 200 եւ ավելի հեկտար տարածքներում հացահատիկային մշակաբույսերի աճեցման ու ստացման համար բավարար է անգամ 4-5 աշխատողի ներկայությունը, այն դեպքում, երբ միրգ-բանջարեղենի մշակման դեպքում հեկտարի վրա աշխատողների քանակը տասնյակների է հասնում: Սա այլ տեղ տանող միջավայր է, ուստի վերադառնանք մեր իրականություն:

Հարցմանս չորրորդ օրվա ավարտին էկոնոմիկայի նախարարությունից պատասխան եմ ստանում. «տրամադրվում է 2022 թ-ին ՀՀ-ում ցորենի ու եգիպտացորենի ցանքատարածությունների եւ միջին բերքատվության վերաբերյալ տեղեկատվություն՝ համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումների. ցորենի արտադրությունը՝ 138 հազար տոննա, եգիպտացորենը 5 հազար տոննա»:

Նշեմ, որ այս թվերն ամիսներ առաջ են հրապարակվել, անգամ թեյնիկ ու արդուկ միացնելիս են հայտնվել, որը նվազագույնս է առնչվում ՀՀ տնտեսության կայացմամբ շահառու ակտիվ քաղաքացուց սպասվող ակնկալիքներին: Որեւէ թվի ու տվյալի իսպառ բացակայությունը լրացնելու նպատակով այցելեցի արդեն հիշատակված ՀՀ վիճկոմիտե. ավաղ ընդամենը, քանզի իրենք միայն թվերի են տիրապետում, իսկ գործընթացներ իրականացնելն ու վերլուծություններ կատարելը նախարարության անելիքն է, վարչապետի բնորոշմամբ՝ բարեփոխումներին խոչընդոտելը: Արդյունքում ունենք հանրապետություն, որտեղ աշխատունակ բնակչության 30 տոկոսից ավելին գյուղոլորտում է ընդգրկված, ուր արդյունավետությունը պակաս շահավետ է համարվում: Թուրքիայում այս ցուցանիշը մոտ 18 տոկոս է, ՌԴ-ում՝ 6 տոկոս, գերզարգացած Հոլանդիայում՝ 2 տոկոս, Բելգիայում՝ 1 տոկոսից էլ պակաս:

Եվ հարցը՝ ո՞ւր հիշատակված երկրների գյուղոլորտի ցուցանիշները, ո՞ւր՝ մերը, ինչում է ինքնաբերաբար: Պատասխանն առայժմ *ավաղ*-ն է, որ պարտադրված ենք արձանագրել: Իսկ ընդհանուր առմամբ ժամանակը ճեղքելու փոխարեն այն շրջանցելն է հարմար դիտարկվում:

Մինչեւ ե՞րբ:

22.08.2023թ.

# Հայաստանի Թեքեյան մշակութային միությունը հայտարարում է մրցույթ

«Թեքեյան» կենտրոնում երեկ կայացած ասուլիսի ընթացքում Հայաստանի Թեքեյան մշակութային միության նախագահ **Ռուբեն Միրզախանյանը** հայտարարեց «Վահան Թեքեյան» ամենամյա մրցանակաբաշխության 2022 թվականի ստեղծագործությունների հայտերի ընդունման մեկնարկի մասին:

Մրցույթը կանցկացվի 4 անվանակարգում՝ «Գրականություն», «Հայագիտություն», «Կերպարվեստ (գունանկար, քանդակ, գրաֆիկա)» եւ «Դեկորատիվ-կիրառական արվեստ»:

Յուրաքանչյուր անվանակարգում հաղթողը կստանա դրամական պարգեւ՝ 1500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ եւ «Վահան Թեքեյան» մրցանակ:

Մրցույթին մասնակցել ցանկացողները՝

❖ **www.armtmm.com** կայքում պետք է սեպտեմբերի 1-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը (ներառյալ) լրացնեն մասնակցության հայտը՝ նեկայացնելով 2022 թվականին իրենց հեղինակած աշխատանքների վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվություն:

❖ մինչ հայտը լրացնելը, անհրաժեշտ է ծանոթանալ մրցույթի պայմաններին,

❖ հայտերի լրացումը հասանելի կլինի սեպտեմբերի 1-ից,

❖ սխալ կամ թերի լրացված հայտերը նկատի չեն առնվի,

❖ հայտը կհաստատվի կամ կմերժվի՝ Ձեր էլեկտրոնային հասցեին հետադարձ նամակով:



Ստեղծագործությունները գնահատելու է մասնագիտական հեղինակավոր ժյուրին՝ նախապատվությունն առաջին հերթին տալով աշխատանքների որակին: Մրցույթին կարող են մասնակցել ինչպես Հայաստանից, այնպես էլ նրա սահմաններից դուրս գտնվողներ: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Հայաստանի Թեքեյան մշակութային միության գրասենյակ ամեն օր՝ բացի շաբաթ եւ կիրակի օրերից՝ ժամը 11:00-16:00-ն (հասցե՝ Երեւան, Խանջյան 50, 2-րդ հարկ, հեռ.՝ 010 552 632, 010 520 783):

«Վահան Թեքեյան» մրցանակաբաշխությունն անցկացվում է արդեն 29-րդ անգամ՝ Հայաստանի Թեքեյան մշակութային միության եւ ԱՄՆ ու Կանադայի Թեքեյան մշակութային միության «Շաքե Թեքեյան-Ղազարյան» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:Մրցանակաբաշխության անցկացման տարիներին «Վահան Թեքեյան» մրցանակ է շնորհվել մշակույթի, գիտության, արվեստի երկու հարյուրից ավելի գործիչների:

HUJ
Voluntary Service of Armenia

# HUJ-ի ճամբարներում՝ ինչպես մեծ ընտանիքում



***Իսպանացին տոլմա է փաթաթում, իտալացին՝ հայերեն հաշվում, լեհը «Իմ փոքրիկ նավակ» է երգում, մեքսիկացին էլ պարում է «Մենք ենք մեր սարերը» երգի տակ, ու սա ամենեւին էլ ֆանտաստիկայի ժանրից չէ: Անհնարը հնարավոր է դառնում Ուսանողական ջոկատների հանրապետական շտաբ (HUJ) կամավորական աշխատանքների ծառայության ճամբարներում: Հայաստանում HUJ-ի շնորհիվ յուրաքանչյուր տարի գործում են միջազգային եւ երկկողմանի ճամբարներ, որտեղ հայ եւ արտասահմանցի կամավորները կատարում են տարածքների բարեկարգման, շրջակա միջավայրի պահպանման աշխատանքներ՝ այդ ամենը համեմելով ճանաչողական եւ մշակութային բովանդակ առօրյայով, էքսկուրսիաներով: Այս մասին առավել մանրամասն տեղեկացանք հենց տեղում՝ այցելելով մի շարք ճամբարներ:***

## «ՏՊԱՎՈՐԻՉ Է, ԵՐԲ ԿԱՐՈՂ ԵՍ ԴԻՊՉԵԼ 7-ՐԴ ԴԱՐԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑԻՆ»

«Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանի տարածքում աշխատող եւ պարող հայ եւ արտասահմանցի կամավորները միանգամից մեզ զարմացրեցին: Օտարերկրացիները ողջունեցին «Բարեւ ձեզ»-ով եւ հայերեն հետաքրքրվելով, թե «ի՞նչ կա-չկա»: Նշված տարածքում ճամբարի ղեկավար **ԼՅՈՒԴՄԻԼԱ ՍԻՄՈՆՅԱՆՑԸ** մեզ հետ զրույցում նշեց, որ ռուս, լեհ, մեքսիկացի, իտալացի կամավորները սովորել են հայտնի «Իմ փոքրիկ նավակը» երգել եւ հայկական պարել՝ «Մենք ենք մեր սարերը» երգի հնչյունների ներքո, որը նրանց սովորեցրել է պրոֆեսիոնալ պարուսույց **Անի Պետրոսյանը**:

Ինչ վերաբերում է արգելոց-թանգարանի տարածքում իրականացվող կամավորական աշխատանքներին, Լյուդմիլան նախ հիշեցրեց տարածքի կարեւորության մասին, որն ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային մշակութային արժեքների ցանկում:

**«Մեր հիմնական նպատակն այս տարածքի մաքրության պահպանումն է: Կամավորների շարքում ունենք 6 օտարազգի ներկայացուցիչ, ինչպես նաեւ հայ կամավորներ, որոնք առույգ եւ սիրով աշխատում են: Հիմնականում հին քարերի արանքում աճած բույսերն ենք մաքրում, թանգարանում ենք աշխատանքներ իրականացնում, օրինակ՝ առավոտյան գորգերն արեւին ենք տալիս, երեկոյան՝ հավաքում: Բացի այդ, որոշ կամավորներ թանգարանի ցուցանակների թարգմանություններ են անում՝ անգլերենից իրենց լեզվով»,** - ասաց Լյուդմիլան, որն, ի դեպ, Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի 4-րդ կուրսի ուսանողուհի է եւ երրորդ տարին է, որ միացել է կամավորների մեծ ընտանիքին:

Ըստ Լյուդմիլայի, արտասահմանցի կամավորներից հայերենը շատ արագ սովորում, ընկալում եւ չի մոռանում Մեքսիկայից ժամանած կամավոր **ԱՆԴՐԵՍ ՄԱՐՏԻՆԵԶ ՍԱՆՉԵԶԸ**: Դրանում մենք համոզվեցինք իր հետ զրույցում: Անդրեսն իր երկրում սովորում է ֆինանսների կառավարման ֆակուլտետում, բայց տպավորված է այն ամենով, ինչով զբաղվում է, որպես կամավոր, «Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանի տարածքում:

**«Թեպետ հաճախ կատակում եմ, որ չեմ սիրում գործ անել, բայց իրականում շատ եմ սիրում ֆիզիկական աշխատանքը: Մանավանդ այս տարածքում աշխատելն ինձ համար անչափ հաճելի է: Եվ բացի աշխատանքը, մենք միմյանց ենք ներկայացնում մեր ժողովուրդների մշակութային առանձնահատկությունները: Հայկական ճաշատեսակները շատ սիրեցի, համով են եւ նման մեքսիկականին: Օրինակ, դուք ունեք լավաշ, մենք՝ տորտիյա»,** - նշեց Անդրեսը՝ ընդգծելով, որ ունենում են տարբեր երկրների օրեր, որի շրջանակում ամեն մեկը ներկայացնում է իր հայրենիքի խոհանոցը, մշակույթն ու լեզուն: Արդյունքում միմյանցից գիտելիքների մեծ պաշար են ձեռք բերում:

Լեհաստանից ժամանած կամավոր **ԲԱՐՏՈՇ ԲԻՍԿՈՒՊԸ** նույնպես հիացած է Հայաստանով: Ավելին՝ արդեն երեք -չորս տարի է ուզում էր Հայաստան գալ եւ վերջապես այստեղ է:

**«Արգելոց-թանգարանի տարածքում աշխատելը հետաքրքրական է, որովհետեւ կարող ես դիպչել 7-րդ դարի կառույցին, ոչ թե այն տեսնել հեռվից կամ նկարներով: Շատ գեղեցիկ տեղ է»,-** տպավորությունները ինձ հետ կիսեց Բարտոշը՝ անկեղծանալով, որ ապագա ինժեներ է եւ որեւէ կապ չունի հնէաբանության ու պատմագիտության հետ:

Քանի որ լեհ կամավորը չափազանց անկեղծ էր, հետաքրքրվեցինք նրանից նաեւ հայաստանյան կիզիչ արեւի ու անտանելի շոգի մասին. **«Իրականում այս շոգն ինձ համար իդեալական է եւ շատ չէ: Ես ատում եմ ձյունը ու որպես չգրված օրենք՝ երբեք չեմ բողոքում շոգից»:**

Սանկտ Պետերբուրգից ժամանած ռուս կամավոր **ԳԼԵԲ ԿՈԶԻՆՆ** էլ ասաց, որ ՌԴ-ում սովորել է արվեստի պատմության ֆակուլտետում եւ առանձնահատուկ տպավորություններ ունի «Զվարթնոց»-ից:

**«Ինձ շատ է դուր գալիս այստեղ: Ընդհանրապես, տեղացիները շատ անկեղծ են, հյուրընկալ: Իհարկե, դժվար է աշխատել առավոտյան արեւի տակ, ինչն ինձ համար անսովոր է, բայց ընտելանում եմ եւ կցանկանայի աշնանը կամ գարնանը կրկին լինել այստեղ»,** - շեշտեց ռուս կամավորը:

Գլեբը նաեւ անկեղծացավ, որ Հայաստանն իրեն դուր է գալիս եւ կցանկանար հնարավորինս երկար մնալ ճամբարում, որովհետեւ, ըստ նրա, հայաստանյան օդում բարություն կա:

## «ԸՆԿԵՐԱՑԵԼ ԵՆՔ ԵՎ ԱՅԴ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՄԲԱՐԻՑ ՀԵՏՈ ԷԼ ԵՆՔ ՊԱՀԵԼՈՒ»

Երեւանի Նիկողայոս Տիգրանյանի անվան Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների համար 14 հատուկ կրթահամալիրի կամավորները համատեղ ուժերով ճաշ էին պատրաստում, երբ այցելեցինք նրանց:

Գեղարվեստի պետական ակադեմիայի Համակարգչային գրաֆիկայի բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի **ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ**, որը կրթահամալիրի ճամբարի ղեկավարն է, մեզ հետ զրույցում ասաց, որ HUJ-ի շնորհիվ արդեն երկրորդ անգամ է կամավորագրվել:

**«Անցյալ տարի հոկտեմբերին մեկնել էի ճամբար՝ Ֆրանսիա: Գնացել էինք այնտեղ ժամանակակից բեմադրություն խաղալու: Սա երկրորդ համագործակցությունն է, եւ շատ ուրախ եմ, որ այս անգամ հենց Հայաստանում է եւ ինչ-որ կերպ կարող եմ մեր երկրին օգտակար լինել»,** - ասաց Մարիաննան:

Ճամբարի ղեկավարը պատմեց, որ համար 14 կրթահամալիրը Հայաստանում իր տեսակով միակն է՝ տեսողության խնդիրներ ունեցող երեխաների համար, եւ կամավորներն առանձնահատուկ ջերմությամբ են աշխատում կրթահամալիրի այգում, բարեկարգում են տարածքը, վերանորոգում ու ներկում են նստարանները, աղբամանները: Հիմնականում աշխատանքը փայտի հետ է:

**«Հայ կամավորները չորսն են, օտարերկրացիները՝ 8-ը: Ունենք կամավորներ Իսպանիայից, Իտալիայից, Ֆրանսիայից, Լեհաստանից, Շվեցարիայից, ի դեպ, որի ներկայացուցիչն ազգությամբ ճապոնացի է: Ճամբարում օրերը շատ հետաքրքրան են անցնում, աշխատանքին զուգահեռ՝ կազմակերպում ենք խաղեր, որոնք խմբի անդամներին ավելի է մտերմացնում: Յուրաքանչյուր կամավոր պատմում է իր երկրի պատմությունը, եւ շատ հետաքրքրական մշակութային փոխանակման ծրագիր է ստացվում: Նույնիսկ դաս ենք անցկացրել, որի ժամանակ օտարերկրացի կամավորները սովորում էին հայերեն գրել իրենց անունները»,** - նշեց Մարիաննան:

Իտալիայից ժամանած կամավոր **ՉԵԶԱՐԵ ԼՈՒԻՋԻ ԲԼԵՆՋԻՆԻՆ**, որն իր երկրում սովորում է համակարգչային ծրագրավորում, մեծ հետաքրքրությամբ է աշխատում փայտի հետ՝ այն էլ երեւանյան տապին:

**«Ընդհանրապես աշխատանքը դժվար չէ: Այն գիտակցումը, որ այս ամենն անում ենք տեսողության խանգարումներ ունեցող երեխաների համար, ծանրաբեռնվածության զգացողությունը վերանում է: Իրականում շատ հետաքրքրական է անցնում առօրյան: Այնպես չէ, որ մի խումբը շատ է աշխատում, մի խումբը՝ քիչ, աշխատանքը բաժանվում է բոլորին հավասար, մենք էլ իրար օգնում ենք ու շատ ուրախ ժամանակ անցկացնում»,** - պատմում է իտալացի կամավորը եւ նշում, որ միշտ մտադրություն է ունեցել Հայաստան գալու, բայց չի ցանկացել լինել զուտ զբոսաշրջիկ:

**«Ուղղակի գալ Հայաստան, պտտվել՝ առանց տեղեկանալու երկրի պատմությանն ու մշակույթին, ինձ համար այդքան էլ հաճելի չէր լինի: Մինչդեռ ճամբարն ինձ մեծ հնարավորություն տվեց ոչ միայն ընկերներ ձեռք բերելու, այլեւ էքսկուրսիաների շնորհիվ ծանոթանալու հայաստանյան մշակույթին, գեղատեսիլ վայրերին, միեւնույն ժամանակ ինքս էլ ներկայացրել եմ իմ երկրի մշակույթն ու պատմությունը»,** - ընդգծեց Չեզարե Լուիջին, որն արդեն հայերենով մինչեւ 10-ը հաշվել է սովորել եւ սիրահարվել հայկական խոհանոցին:

**«Ճամբարի ամենավառ հիշողություններից, որն ինձ մոտ տպավորվել է, տոլմայի դասն էր: Սովորում էինք ինչպես տոլմա փաթաթել եւ ծանոթանում հայկական խոհանոցին: Քանի որ շատ եմ սիրում համով ուտելիքներ, սա ինձ համար շատ մեծ պատճառներից մեկը կարող է լինել, որ հետագայում վերադառնամ Հայաստան»,** - ասում է Չեզարե Լուիջին:

Հայաստանյան կամավորներից Ճարտարապետական համալսարանի շրջանավարտ **ՍՅՈՒԶԻ ԱՍԼԱՆՅԱՆՆ** էլ պատմեց, որ թեպետ ծանրաբեռնված են անցնում ճամբարում օրերը, բայց այդ ամենից իրենք հաճույք են ստանում:

**«Ամենակարեւորը՝ կա այն գիտակցումը, թե ինչի համար ենք այս աշխատանքը կատարում: Սա ամենափոքրիկ օգնությունն է, որ կարող ենք ցուցաբերել տեսողության խանգարումներ ունեցող երեխաների համար»,** - շեշտեց հայ կամավորը:

Ի դեպ, Ուսանողական ջոկատների հանրապետական շտաբի կամավորների շարքում է նաեւ արցախցի **ՀԱՅԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ**:

⇨9

ՍՏԵՓԱՆ ՓԵՇԴԻՄԱԼՋԻ
Սան Ֆրանցիսկո, ԱՄՆ

# Աթաթուրքի ժառանգության իրական նշանակությունը

*«Արմինյն Միրոր-Սփեքթեյթըրից» թարգմանաբար ներկայացվող հոդվածի հեղինակը հաղորդակցությունների ոլորտի փորձագետ է: Թոռը` Հայոց ցեղասպանությունից մազապուրծ վերապրողների: Ապրում է Սան Ֆրանցիսկոյում:*

Մինչեւ տարեվերջ Թուրքիան նշելու է իր արդի պատմության ամենահարգված դեմքերից մեկի` **Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի** կերտած հանրապետության 100-ամյակը: Մինչ բազմաթիվ գովաբանական եւ մեծարման խոսքեր են հնչելու Օսմանյան կայսրության փլուզումից հետո դեպի անկախություն եւ ժողովրդավարություն ճանապարհը հարթող առաջնորդի պատվին, իմ պարագայի նման ամերիկահայ (եւ ընդհանրապես բոլոր հայ- **Հ.Ծ.**) ընտանիքների համար նա մնալու է երիտթուրքերի 1915-ին իրականացրած ցեղասպանական հանցագործությունների շարունակողը:

Տարիներ շարունակ ամերիկահայերը պայքարել են, որպեսզի աշխարհը ճանաչի այդ ցեղասպանությունը, որի ընթացքում Օսմանյան թուրքերի կողմից կանոնակարգված ձեւով ոչնչացվեցին 1,5 միլիոն հայեր, հանցագործություն` որ Թուրքիան հերքում է մինչ օրս: Եվ մինչ Աթաթուրքին են վերագրում Թուրքիան առաջադիմական երկիր-պետություն դարձնելու համար, միեւնույն է, նա եւս ատելության եւ թշնամության իր բաժինն ունի Թուրքիայում ապրող փոքրամասնությունների` հայերի, հույների եւ ասորիների համար: Նա այդ խմբավորումներին խոչընդոտ էր համարում Փոքր Ասիայի թուրքոֆիկացման եւ իսլամականացման ճանապարհին: Այդ պատճառով էլ նա արշավ ծավալեց նրանց դեմ, որպեսզի այդ համայնքներին երկրից դուրս վտարի եւ շարժումը իր գագաթնակետին հասավ Զմյուռնիայում 1922-ին, որտեղ թուրքական զորքերը քարուքանդ արեցին ամբողջ քաղաքը եւ ավերի ենթարկեցին բնակիչներին, որոնց մեծ մասը հույներ էին եւ հայեր: Բազմաթիվ առումներով Աթաթուրքը փորձեց ավարտին հասցնել 1915-ին երիտթուրքերի սկսած գործը եւ մի քայլ ավելի առաջ գնաց վստահ լինելու համար, որ պատմությունը հետագայում իրեն եւ իր երկիրը նպաստավոր դիրքերից կդիտարկի: Նա իր մահվանից անմիջապես առաջ հիմնեց այսպես կոչված Թուրքական Պատմության Ընկերությունը, որը պատասխանատու էր դառնալու պահպանելու եւ հաջորդ սերունդներին փոխանցելու պետության պաշտոնական պատմությունը: Դրանով նա ցանկանում էր համոզված լինել, որ մարդկության դեմ գործված այդ հանցագործություններում Թուրքիայի դերն ու պատասխանատվությունը ի վերջո մոռացության կմատնվեն կամ էլ պատմության արկղում կհայտնվեն:



Այս մտայնությունն է, մտածելակերպը, որ ամբողջ մի հարյուրամյակ Թուրքիան առաջ է տարել եւ այսօր էլ նույն ձեւով շարունակում է, որ Թուրքիան այդքան փող է ծախսում քարոզչական գործակալությունների վրա, որպեսզի հորինեն եւ ձեւավորեն իր դրական պատկերը աշխարհում: Դա է նաեւ պատճառը, որ Թուրքիայի ներկայիս բռնատեր նախագահ **Ռեջեփ Թայիփ Էրդողանը** քննադատաբար է վերաբերվում բոլոր այն երկրներին, որոնք ճանաչել ու ճանաչում են Հայոց ցեղասպանությունը եւ պատասխանատու է համարում նրանց մարդու իրավունքների խախտման մեջ: Իր դրական «իմիջի» պահպանման հետեւից ընկած ղեկավարը նույնիսկ ավելի հեռուն է գնացել` փոխելով Թուրքիայի միջազգային անվանումը եւ դարձնելով այն «Թուրքիյե», որպեսզի որեւէ կապ չունենա կենդանական աշխարհի որեւէ ներկայացուցչի հետ (անգլերենում «թըրքի» բառը նշանակում է հնդկահավ- **Հ.Ծ.**):

Թուրքիայի հոբելյանական տարեդարձը, ի դեպ, համընկնում է հայ ժողովրդի համար վճռորոշ մի ժամանակաշրջանի հետ: 2020 թվի աշնանը, Թուրքիայի դաշնակից Ադրբեջանը չպատճառաբանված պատերազմ նախաձեռնեց իրենց պատմական հայրենիքը հանդիսացող Լեռնային Ղարաբաղում ապրող հայերի դեմ: 44-օրյա պատերազմին հաջորդեց էթնիկական զտման հետեւանքում հայերին տարածաշրջանից վերացնելու արշավը: Աշխարհով մեկ սփռված սփյուռքահայերը իրենց անցյալի ցավալի պատմության ոսպնյակի միջով տեսնում են, թե ինչ է կատարվում Արցախում: Նրանք հասկանում են, որ Թուրքիայի աջակցությամբ իրագործվող ագրեսիայի այս վերջին գործողությունները շարունակությունն են Հայոց ցեղասպանության եւ սպառնում են իրենց գոյությանը:

Աթաթուրքի ժառանգությունը եւ Արցախի շուրջ կատարվող իրադարձությունները փոխկապակցված են: Լայն իմաստով պատմությունը կրկնվում է: Նենգափոխելով իր պատմությունը Թուրքիան փաստորեն վստահության երաշխիք է տալիս Ադրբեջանին կատարելու կամ հռետորաբանելու ինչ ցանկանում է, առանց մտածելու հետեւանքների մասին:

Նման ինքնավստահությունը Ադրբեջանին թույլ է տալիս անօրինական ձեւով ավելի քան ութ ամիս արգելափակելու միակ ճանապարհը, որ 120 հազար հայերին կապում է արտաքին աշխարհի հետ: Ավելին, Ադրբեջանից ներկայիս հնչող ճոռոմաբանությունները արմատապես հար եւ նման են Օսմանյան կայսրության վերջին օրերի եւ Թուրքիայի հանրապետության հռչակման առաջին օրերի հայերի դեմ ուղղված ռասիզմին եւ այլատյացությանը:

Այսպիսով, եթե նույնիսկ ուղերձը հղողը տարբեր է, ուղերձը ինքը նույնն է: Ադրբեջանը օգտվում է Թուրքիայի պատմության գրքերի էջերից եւ հայերի դեմ ատելության մթնոլորտ ստեղծում, ինչպես հռետորաբանությամբ, այնպես էլ գործողություններով: Մենք քանիցս լսել ենք, թե ինչպես է Ադրբեջանի նախագահ **Իլհամ Ալիեւը** աներկբայորեն հայտարարում, որ Հայաստանը ադրբեջանական պատմական տարածք է «Արեւմտան Ադրբեջան» անվանումով: Մենք այս ատելությանը ականատես ենք լինում հայ ռազմագերիների եւ զինվորների նկատմամբ գործադրված վայրագությունների եւ աղաղակող բռնությունների տեսարանները դիտելով: Ադրբեջանը շարունակում է հայերի նկատմամբ ատելություն սերմանել նաեւ կրթության միջոցով, երկրի դպրոցական երեխաների շրջանում իրականացնելով պետական քաղաքականություն:

Ադրբեջանը օգտվում է Թուրքիայի փորձից եւ մի անգամ եւս ապացուցում, որ պատմությունից դասեր չքաղողը դատապարտված է կրկին ենթարկվելու դրա կրկնողությանը: Այդ պատճառով էլ Թուրքիան պարտավոր է առաջիկա տարեդարձը եւ տոնակատարությունները պատեհ առիթ ծառայեցնել առճակատվելու իր անցյալի պատմության հետ, եւ պաշտոնապես ճանաչելու իր դերն ու պատասխանատվությունը Հայոց ցեղասպանության իրականացման մեջ, հրաժարվելով Աթաթուրքի ժամանակներից սկիզբ առած ժխտողական քաղաքականությունից: Թուրքիան պարտավոր է վերջ դնելու պատմությունը աղավաղելու ռեւիզիոնիստական փորձերին: Դա վտանգավոր է եւ անպատասխանատու արարք, որը կյանքեր է խլում:

Եթե Թուրքիան իրոք ցանկանում է լինել մեծամասնականորեն մահմեդական օրինակելի մի երկիր, ապա առերեսումը իր անցյալի հետ պարտադիր է:

Հայ ժողովուրդը արժանի է դրան:

**Անգլ. բնագրից թարգմանեց**
**ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**

⇨8

Նա Ստեփանակերտից է, սովորում է Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի առաջին կուրսում եւ առաջին անգամ է կամավորության փորձ ձեռքբերում: Արցախի շրջափակման պատճառով` այդպես էլ չի կարողացել տուն վերադառնալ, որոշել է կամավորագրվել` Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների համար 14 հատուկ դպրոցի աշխատանքներում:

**«Ինձ շատ օգնեց այս ճամբարը, որովհետեւ տանը մնալով` անընդհատ մտածում էի հարազատներիս մասին: Իսկ այստեղ շփվելով հասակակից օտարերկրացիների հետ և՛ մտահորիզոնս է ընդլայնվում, և՛ նաեւ փոքր-ինչ ցրվում եմ: Բացի այդ, ինչ-որ չափով կարողանում եմ այսկերպ օգնել Արցախին` տարբեր երկրներից եկած կամավորներին տեղեկացնելով ստեղծված իրավիճակի մասին: Հայկական դասերից մեկի ժամանակ ներկայացրել եմ Արցախի պատմությունը, նրանք հետաքրքրված են այդ ամենով», -** ասաց Հայկը եւ նշեց, որ ճամբարում անվճար սնվում են, գիշերում եւ հիանալի ժամանակ անցկացնում:

**«Դարձել ենք մեծ ընտանիք: Ընկերացել ենք եւ այդ ընկերությունը ճամբարից հետո էլ ենք պահելու: Ինչ վերաբերում է պայմաններին, այնքան լավ է, որ նույնիսկ բանակի հետ համեմատելը տեղին չէ: Ունենք ազգային ուտեստների օր, եւ յուրաքանչյուրն իր ազգային խոհանոցով կարողանում է հիացնել մյուսներին: Շատ հեշտ լեզու ենք գտել օտարերկրացիների հետ: Աշխատանքի բաժանումը կատարվում է հավասարաչափ: Իրենք շատ աշխատասեր են: Հայերիս եւ օտարերկրացիների տարբերությունն այն է, որ մենք միշտ ձգտում ենք աշխատանքը թեթեւացնել, մտածում ենք այլընտրանքային տարբերակներ, իսկ իրենք պատրաստակամ են անել աշխատանքը, ինչպես հարկն է ու չշեղվել», -** անկեղծանում է արցախցի կամավորը, որն արդեն յուրացրել է իտալերեն մի շարք բառեր: Նա վստահեցնում է, որ նույնքան հայերեն բառեր էլ արդեն իտալացի կամավորն է սովորել:

Հայկը նաեւ պատմեց, որ օտարերկացիները տպավորված են ոչ միայն կապուտաչյա Սեւանով, պատմական բացառիկ արժեք ունեցող Գառնիի տաճարով եւ Գեղարդավանքով, այցելած մի շարք թանգարաններով, այլ նաեւ Հանրապետության հրապարակի երգող շատրվաններով ու Հյուսիսային պողոտայով: Նրանցից շատերը Հայաստանի միայն տեղն են իմացել քարտեզի վրա, ուրիշ ոչինչ, եւ հիմա բացահայտելով իրենց համար մեր երկիրը` վստահեցնում են` կվերադառնան կրկին:

# HUJ-ի ճամբարներում` ինչպես մեծ ընտանիքում





*Շարունակությունը` հաջորդ համարում*

Սերժ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ԴՈՆԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. Շիրակի նվիրյալ դուստրը

*Բարի անուն, լուսավոր հետագիծ*

Իմ դիմանկարը պատկերագրելիս՝ մոսկովաբնակ գեղանկարչուհի **Մարիամ Ասլամազյանը** եւ հաճելի զրուցում էր հետս, եւ նկարում: Դա 1977-ին էր, Երեւանի իր արվեստանոցում: Ասաց, որ ինքը եւ նկարչուհի քույրը՝ **Երանուհին**, վաղեմի՜, շա՜տ նվիրական մի փափագ ունեն՝ հայրենի Լենինականում ունենալ մշտական գործող պատկերասրահ, ուր, արդեն որպես քաղաքի սեփականություն, կցուցադրվի արգասավոր տասնամյակների իրենց ստեղծագործությունների հունձքը:

...1987 թ. նոյեմբերի 6-ին քաղաքի կենտրոնում, հնամենի երկհարկանի շենքում, տեղի ունեցավ «Ասլամազյան քույրերի պատկերասրահ»-ի հանդիսավոր բացումը: Մ. Ասլամազյանի հրավերով ինձ էլ մասնակցեցի մշակութային այդ նշանակալի իրադարձությանը՝ միաժամանակ կատարելով «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրում միջոցառումը լուսաբանելու հանձնառությունս:

Պատկերասրահը բացվեց ՀԿԿ Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար **Դոնարա Հարությունյանի** ներածականով, գործիչ՝ որի դերն անուրանալի է պատկերասրահի ստեղծման գործում: Շատ տպավորիչ էր հռետորական ձիրքով օժտված, արվեստասեր, գրագետ, բանիմաց մարդու եւ պաշտոնյայի նրա խոսքը: Ակներեւ էր նաեւ, որ պատասխանատվության բարձր զգացում ունեցողի ջանադրությամբ նա նախապես բարեխղճորեն ծանոթացել էր գեղագետ քույրերի ստեղծագործական ուղու մասին պատկերագրքերին ու մամուլի հրապարակումներին: Ուստի նրա խոսքը հավուր պատշաճի էր, բովանդակալից՝ պարուրված գեղարվեստական ոռոգակի երանգավորումներով:

Նկարչուհի քույրերը ինձ ծանոթացրին Դոնարա Ասֆանազովնայի հետ՝ ներկայացնելով որպես «երկարամյա մեր բարեկամ» եւ իրենց ստեղծագործական աշխարհի մասին հրապարակումների հեղինակ:

Անցավ եւս մեկ տասնամյակ: Դեպքերի ոչ բարեբաստիկ դասավորությամբ, եղավ, որ նրա եղբայր **Յուրին** 1988-ի ավերիչ երկրաշարժից վնասված լենինականյան տան փոխարեն Աշտարակում, հենց մեր՝ Չարենցի փողոցում, երկհարկանի նոր տուն կառուցեց:

Ես հաճախ էի լինում Շիրակի ուրույն կոլորիտի ու կենցաղի կնիքը կրող նրանց նոր օջախում, մանավանդ այցելում զրուցասեր, աշխարհատես ու կենսուրախ տիկին Ազատուհուն:

Մի օր էլ այստեղ կայացավ հարազատներին այցելության եկած Դոնարա Ասֆանազովնայի եւ իմ երկրորդ հանդիպումը: Նա այլեւս չէր պաշտոնավարում, սակայն շահեկանորեն ակնաբախ էր բեղուն կյանքի ճանապարհ անցած՝ պետական-քաղաքական գործչի, լայնախոհ, լրջմիտ ու բնական մարդու նրա վեհ կեցվածքը: Ինձ տեսնելուն պես հաստատական շեշտով ասաց, որ դեմքս ծանոթ է: Ես հիշեցրի՝ «Ասլամազյան քույրերի պատկերասրահ»-ի բացման ժամանակ ենք ծանոթացել: Ի պատիվ իրեն եւ ի զարմանս ինձ՝ նա իսկույն մտաբերեց հիշյալ ամսագրում միջոցառման մասին իմ հրապարակած հոդվածը եւ ուղղակի ասաց՝ վերնագիրը շատ խոսուն էր՝ «Քույրերի վերադարձը տուն»:

Միշտ ակտիվ կենսադիրքորոշում ունեցող տիկին Ազատուհու հաճելի մասնակցությամբ մեր զրույցը ծավալվեց թեյի սեղանի շուրջը: Թեպետեւ այդ օրվանից արդեն ավելի քան քառորդ դար է անցել, սակայն ցայսօր հիշողությանս մեջ անջնջելի են մեր զրույցի՝ հիշատակման արժանի առանձին դրվագներ: Դրանցից մեկը շատ հարիր է մեծն Վիլյամ Սարոյանի դիպուկ բնորոշմամբ՝ «հայու ճակատագիր»-ին:

- Դուք երեւի չգիտեք, որ իմ սիրելի մայրիկը եւ ձեր հարգելի տիկին Ազատուհին, ապա եւ նրանից սերվածներս, ճակատագրի դաժանագույն դիպվածով, կարող էինք եւ ընդհանրապես այս լույս աշխարհում չլինել, եթե...

Եվ մայր ու աղջիկ, միմյանց լրացնելով, պատմեցին ծնողներից լսածը, թե ինչպես աղետալի 1915-ին Բայբուրդից դեպի Արեւելյան Հայաստան գաղթի վտանգաշատ ճանապարհին, մթին անտառում կորցնում են չորսամյա Ազատուհուն: Յոթնամյա քույրը՝ Արաքսյան է նկատում նրա բացակայությունը եւ լացուկոծով, խելակորույս, մոտ կես կիլոմետրի չափ ետ է վազում, հետեւից էլ՝ ավագ հարազատները: Նրանք անտառի մթին մի ծմակում գտնում են վախից կուչ եկած աղջնակին, գրկում, ջերմ համբույրներով սփոփում նրան ու վերադառնում գաղթյալների իրենց քարավանը: Մեկ ծանր հուշ էլ կա. նույն միջոցին Ազատուհու մայրիկի շալակին հոգին ավանդում է օրեր առաջ թուրքի յաթաղանից վիրավոր, արնաքամված 15-ամյա եղբայրը՝ Գրիգորը...

***

Մեր զրույցից հիշատակման արժանի է նաեւ հետեւյալ դրվագը. երբ Հայաստանի կոմկուսի Կենտկոմում Դոնարա Հարությունյանին առաջարկում են ստանձնել ՀԿԿ Լենինականի քաղկոմի առաջին քարտուղարի պարտականությունները, նա խոհեմաբար ժամանակ է խնդրում՝ մտածելու եւ պատասխանելու: Արա մանրակրկիտ եւ համակողմանիորեն քննելով առաջարկությունը՝ գալիս, հանգում է հոգեբանորեն դժվարհաղթահարելի մի խոչընդոտի՝ բարոյական այն պատվարին, թե աշխատանքային հարաբերություններում ինչպես վերաբերվել իրեն ենթակա տղամարդկանց, «որպեսզի, անգամ ակամա, չնսեմացնեմ մեր հպարտ ու պատվասեր այրերի մարդկային արժանապատվությունը...»: Եվ այն է՝ արդեն որոշում է գնալ, հրաժարվել առաջարկից, մայրն ամբողջ հասակով դեմն է ելնում՝ ասելով.

- Ինչպե՞ս թե հրաժարվես,- խոսեց մայրս ամենեւին առարկություն չընդունող պահանջատիրոջ խիստ տոնով,- այդ դեպքում գիտցիր՝ քո՝ երիտասարդ, խոստումնալից կադրի մասին Կենտկոմը եւ ընկեր Դեմիրճյանը կմտածեն, որ անձնապաստան մարդ ես, խուսափում ես բարձր պատասխանատվությունից եւ դրանից հետո, աղջիկ ջան, շա՜տ ճիշտ կանեն, որ քեզ ընդհանրապես... մոռանան... Այնպես որ՝ գնա եւ հանձն առ գործը: Դու Ասֆանազի ու Ազատուհու աղջիկը չե՞ս...

Ահա այս բախտորոշ, ամենաանձնական հոգեվիճակում էր, որ շրջահայաց, ուսյալ մայրիկի ծնողական հորդոր-պահանջը վճռական եղավ եւ, պատկերավոր ասած՝ դստեր ներաշխարհում տատանվող հոգեբանական կշեռքի նժարը բեկվեց, ծանրացավ... հօգուտ համաձայնության...



Այդ օրվա մեր խոսքուզրույցից մի հուշիկ էլ է մնացել. Դ. Հարությունյանը վերհիշեց, որ իրեն գրեթե միշտ հաջողվում էր համատեղել եւ պաշտոնական գործը, ապա նաեւ տնային տնտեսուհու շատ տարամետ վիճակները: Ասաց՝ երբ խիստ լարված աշխատանքային օրվա վերջում (մի ամբո՜ղջ քաղաքի հոգս ու գործ...) տուն էի հասնում ու հենց մեր տան շեմից ներս մտնում, նույն վայրկյանից զարմանալիորեն կարողանում էի ձերբազատվել դրսին առնչվող, ինձ պաշարած մտքերից ու մտահոգություններից: Մեր տանը ինձ զգում էի իբրեւ իմ զավակների կարոտյալ մայր, ամուսնուս խոնարհ զուգընկեր, մայրիկիս անհագուրդ սիրող դուստր:

Եվ շուտով իմ տուն-ամրոցի լիիրավ տիրուհին դարձած՝ հաճույքով կրում էի տնային խալաթը, խոհանոցային գոգնոցը...

- Ի դեպ, տասնամյակների իմ փորձով ու կենսակերպով շատ եմ կարեւորում պաշտոնական (մտավոր, մասնագիտական...) աշխատանքի եւ տնային զբաղմունքի ճիշտ հերթագայումը,- վերջում, որպես բարի խորհուրդ, հավելեց հարուստ, բազմաբեղուն աշխատանքային կենսագրության տեր Գյումրու պատվավոր քաղաքացին:

***

Դոնարա Հարության պատվասեր, արդարամիտ մարդուն եւ միշտ իր ճշմարիտ դիրքորոշումն ունեցող քաղաքացուն բնութագրող մեկ հուշ-պատառիկ էլ գրականագետ, բանասիրության դոկտոր, «Խորհրդային Հայաստան» թերթի 1988-1991 թթ. գլխավոր խմբագիր **Շչորս Դավթյանի** պատմածից:

2012 թ. հոկտեմբերի 1-ին Շ. Դավթյանն ինձ հրավիրեց իր գլխավորած «Համո Սահյան» գիտամշակութային կենտրոն: Մինչ բանաստեղծի հատորների վերահրատարակության առնչությամբ մեր բուն անելիքին անցնելը, նա հետաքրքրվեց՝ երեկ երեկոյան Հ1 հեռուստաալիքով դիտե՞լ եմ «Երգ-երգոց» հաղորդումը: Ասացի՝ եւ՛ դիտել, եւ՛ հաճույքով ունկնդրել եմ բոլոր կատարումները, հրավիրյալների մեկնաբանությունները, ուր, արդարեւ, ըստ արժանվույն ներկայացվեց գուսան Շերամը:

Հետո, մասնավորաբար, անդրադարձանք հաղորդման ընթացքում Դ. Հարությունյանի՝ օրվա խորհրդով ներշնչված նրա ծանրակշիռ խոսքին ու մեկնաբանություններին, որ, ըստ էության, մի յուրօրինակ ուսանելի դաս էր... հեռուստաէկրանից...

Այնուհետեւ Շ. Դավթյանը վերհիշեց մի «միջադեպ» խորհրդային անցյալից: Ասաց՝ Սիսիանի կուսշրջկոմի առաջին քարտուղարն էի: ՀԿԿ հերթական համագումարի աշխատանքներին մասնակցելու համար՝ ինձ հետ նիստերի դահլիճ մտան մեր շրջանից ընտրված պատվիրակները, որոնցից երկուսը՝ Սոցիալիստական աշխատանքի հերոսներ: Վերջիններս՝ մեկը հովիվ, մյուսը՝ կոմբայնավար, հերոսի ոսկե աստղերը լայնալանջ կրծքներին, գնացին եւ զբաղեցրին իրենց հասկացված աթոռները: Ես դեռ չէի հասցրել ողջունել իմ բոլոր գործընկերներին, Երեւան քաղաքի կուսշրջկոմների քարտուղարները, տեղերում մի տեսակ աշխուժացած եւ իբրեւ թե կատակով, սակայն բավական աններելի անբարտավանորեն, շատերին լսելի ձայնով ասացին.

- Եկա՜ն, արդեն սկսեցին գալ գեղի քարտուղարները՝ իրենց «հոտավետ» չոբաններով:

Ես, իհարկե, ներքուստ խիստ ընդվզեցի (դե կատակ խոսքին էլ չափ կա...) եւ այն է՝ ուզում էի դրանց մի լավ շշպռել, Դոնարա Ասֆանազովնան, որ մոտերքում էր եւ լսել էր դրանց անհամ կատակը, ինձնից առաջ ընկավ.

- Ձեր հասկացողության ու նկարագրի տեր մարդիկ պարզապես արժանի չեն բարձր պատասխանատու պաշտոններ վարել: Այդ ինչպե՞ս եք դուք վերաբերվում մեր գյուղաշխարհի՝ երկիր եւ հենց ձեզ կերակրող աշխատանքի անվանի մարդկանց... Գոնե սկսվեք, մի բացահայտեք ձեր իսկական էությունը... Իսկ ինչ վերաբերում է ձեր տգեղ բնորոշմամբ՝ «գեղի քարտուղարներին», եթե դրա առիթը տվեց մեր հարգարժան Շչորս Բագրատովիչը, ապա վստահաբար կարող եմ պնդել, որ նրան հավասար գրագետի այս դահլիճում եւ ոչ մի կուսշրջկոմի քարտուղար չեմ ճանաչում... սկսած ձեզանից...

Եվ քանի որ բոլորս էլ խորապես հարգում ու պատկառում էինք միշտ հանդուգն ու ճշմարտախոս Դոնարա Ասֆանազովնայից, նրանք «սսկվեցին», այլեւս եւ ոչ մի ծպտուն, լռեցին՝ սխալմունք գործած աշակերտի հեզությամբ...

***

Դոնարա Հարությունյան - բանիվ, մտոք եւ գործով ապրած ու արարած ինը տասնամյակի (առայժմ՝ ինը...) իմաստավորված մի ամբողջ կյանք...

Երախտագետ մարդկանց, հատկապես լենինականցի-գյումրեցիների սրտերում նա մնում է որպես մեկը քաղաքի լավագույն ղեկավարներից, ականծանքով հիշվող անուն, Մարդ եւ պետական-քաղաքական գործիչ:

Անվիճելի իրողություն է եւ այն, որ ամենուր, մարդկանց հոգում ու մտապատկերում, նա միայն թողել է բարի, լուսավոր հետագիծ:

**ՍՈՒՐԵՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**

*Միջազգայնագետ, ԱՄՆ արտաքին քաղաքականության փորձագետ*

# Մ. Նահանգների արձագանքը Լաչինի միջանցքի արգելափակմանը



Արցախի բնակչությունն ավելի քան յոթ ամիս է, ինչ շրջափակման մեջ է գտնվում։ Հայաստանը Արցախին կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը, արգելափակված է։ Իրադրությունը գնալով ավելի է սրվում, քանի որ Ադրբեջանը խոչընդոտում է սննդի, վառելիքի եւ անհրաժեշտ բոլոր այլ ապրանքների առաքումը Լեռնային Ղարաբաղ։ Այս արգելափակման հետեւանքում այնտեղ ապրող հայերը հայտնվել են բնաջնջման սպառնալիքի տակ։

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) տվյալներով՝ «տասնյակ հազարավոր հայեր այդ ճանապարհով իրենց հասանելիք հումանիտար օգնության հույսով են ապրում։ Տեղի քաղաքացիական բնակչությունը դիմագրավում է կենսական նշանակության դեղորայքի, մանկական սննդի եւ առողջապահական պարագաների պակասը։ Բանջարեղենը, միրգը եւ հացը չափազանց նվազ է եւ թանկ արժե, մինչ այլ ապրանքներ, ինչպես օրինակ՝ կաթնային արտադրանքներ, արեւածաղկի ձեթ, հացահատիկներ, ձկնեղեն եւ հավեղեն՝ ընդհանրապես չկան։ ԿԽՄԿ-ին վերջին անգամ թույլատրվել է դեղորայք եւ սննդի անհրաժեշտ տեսակներ տարածաշրջան հասցնել մի քանի շաբաթ առաջ»։

Լեռնային Ղարաբաղում շարունակվող իրավիճակը այնքան ծանր է, որ Միջազգային իրավունքի առաջատար մասնագետ, միջազգային քրեական դատարանի նախկին գլխավոր դատախազ եւ Հարվարդ ու Յեյլ համալսարանների դասախոս **Լուիս Մորենո Օկամպոն** պնդում է, որ Լեռնային Ղարաբաղի արգելափակումը Ադրբեջանի կողմից հավասարազոր է ցեղասպանության։ Սովամահությունը նա բնութագրում է որպես անտեսանելի զենք եւ վստահեցնում, որ անմիջական միջամտություն եթե չլինի, հայերի այդ խմբաքանակը մի քանի շաբաթից դատապարտված կլինի ոչնչացման։ Բազմաթիվ առումներով Լեռնային Ղարաբաղի բնիկ ժողովրդի սովամահությունը տիպիկ ցեղասպանություն է ապրելու այնպիսի պայմանների ստեղծումով, որ անխուսափելիորեն մահվան է առաջնորդում։ Դրանով փակվում է ողբերգական օղակը, որովհետեւ «1915-ին թուրք իշխանավորների վերաբերմունքը հայերին օրինակ է ծառայում կյանքի նման պայմանների ստեղծումով իրականացնելու ցեղասպանություն»։

Ադրբեջանը երկու տարբերակ է առաջարկում։ Կա՛մ ենթարկվել Բաքվի կանոններին, կա՛մ էլ շարունակել ապրել զրկանքների եւ տառապանքի մեջ։

Լեռնային Ղարաբաղում ստեղծված այս հումանիտար ճգնաժամի հանգամանքներում կարեւոր է քննարկել Մ. Նահանգների իշխանությունների արձագանքները։ Վերջիններս այս հարցին անդրադարձել են արգելափակման երկրորդ օրվանից սկսած, եւ քանի արգելափակումը շարունակվել է, անդրադարձումները եւս ավելացել են։ Բայց դրանք սոսկ հայտարարություններ ու կոչեր են եղել հիմնականում։ Նշանակալի որեւէ քայլ ցարդ չի կատարվել։

Պետքարտուղարության անունից անդրադարձ եղել է խոսնակի միջոցով մամլո ճեպազրույցների ժամանակ։ Նաեւ անհատական հայտարարություններ եւ հեռախոսազրույցներ են եղել պետքարտուղար **Էնթոնի Բլինքենի** եւ Ադրբեջանի նախագահ **Իլհամ Ալիեւի** միջեւ։ Բացի դրանցից, Մ. Նահանգների կոնգրեսն է անդրադարձել, մասնավորապես կոնգրեսի հայկական հարցերով զբաղվող հանձնախմբի անդամների կողմից։

Լաչինի միջանցքի վերաբերյալ առաջին արձագանքը պետքարտուղարության խոսնակի կողմից հնչեց 2022-ի դեկտեմբերի 13-ի մամլո հաղորդագրության ժամանակ։ **Նեդ Պրայսը** նշեց. «Մենք կոչ ենք անում Ադրբեջանի կառավարությանը վերականգնել ազատ երթեւեկությունը միջանցքով»։ Նման տեղեկատվություն հայտնվեց նաեւ խոսնակի թվիթերյան (այժմ X) էջում։ Դրանից հետո Լաչինի միջանցքի հարցը բազմիցս բարձրացվեց պետքարտուղարության մամուլի հաղորդագրություններում։ Բացի դրանցից, տեղի ունեցան նաեւ հեռախոսազրույցներ Բլինքենի եւ Ալիեւի միջեւ։ Առաջինը տեղի ունեցավ արգելափակումից մոտ մեկ ամիս հետո, 2023-ի հունվարի 23-ին։ Այդ ժամանակ Բլինքենը հարկադրեց «Լաչինի միջանցքի անմիջական վերաբացումը բոլոր տեսակի կոմերցիոն երթեւեկությունների համար»։ Դրան հաջորդեցին, գրեթե միեւնույն բովանդակությամբ, մի քանի հեռախոսազրույցներ՝ մարտի 21-ին, ապրիլի 23-ին եւ 30-ին, այնուհետեւ՝ հուլիսի 12-ին եւ 30-ին։ Դրանցում Մ. Նահանգները խորը մտահոգություն էր հայտնում նաեւ Լաչինի միջանցքում ադրբեջանական անցակետի տեղակայման կապակցությամբ։ Իսկ վերջին հեռախոսազրույցի ժամանակ կարելի էր նկատել մի փոքր փոփոխություն բառերի։ Պետքարտուղարը ընդգծել էր Լաչինի միջանցքով ազատ երթեւեկելու հրատապությունը, ինչը կապված էր Լեռնային Ղարաբաղում իրադրության վատթարացման հետ։

Ղարաբաղի վերաբերյալ հայտարարություններով հանդես եկավ նաեւ USAID-ի կառավարիչ՝ **Սամանթա Փաուերը**։ Առաջին անգամ՝ արգելափակումից մեկ ամիս անց, որի ընթացքում նա կոչ արեց վերականգնել երթեւեկությունը Լաչինի միջանցքով։ Իսկ վերջինը՝ օգոստոսի 1-ին, որտեղ նա իր միակցությունը հայտնեց Բլինքենի հայտարարությանը։

Ներկայացուցիչների պալատի եւ սենատի անդամները շատ արագ անդրադարձան Ադրբեջանի կողմից Ղարաբաղի շրջափակմանը։ Հայկական հարցերով զբաղվող կոնգրեսական հանձնաժողովի անդամներն ու սենատորները առաջիններից էին, որ դատապարտեցին Ադրբեջանի գործողությունները եւ նամակներ հղեցին Մ. Նահանգների վարչակազմին։ Նրանք ուշադրության կիզակետում էին պահում հիմնականում հետեւյալ ոլորտները. շրջափակման դեմ օրենսդրական հոդվածի ընդունումը, Ադրբեջանին ռազմական օժանդակության մատակարարման դադարեցումը, Լեռնային Ղարաբաղին եւ Հայաստանին արտակարգ օժանդակություն ցուցաբերելը, Բայդենի վարչակարգին կոչ անելը, որ խաղաղ լուծում գտնի ճգնաժամին, եւ Լեռնային Ղարաբաղի անկախության միջազգայնորեն ճանաչումը։

Հակառակ Հայաստանի եւ Ադրբեջանի բանակցային գործընթացում Մ. Նահանգների ակտիվ ներգրավվածությանը. մինչ օրս Ամերիկան ոչ մի կոնկրետ քայլ չի գործադրել Ադրբեջանի դեմ, ո՛չ պատժամիջոցներ կիրառելու, ո՛չ էլ քաղաքական ճնշում գործադրելու առումներով։ Ավելին, ոչ մի հումանիտար օժանդակություն, անգամ USAID-ի կողմից, չի ցուցաբերվել Արցախի սովահար բնակչությանը։ Այլ խոսքով, Մ. Նահանգների պաշտոնական անձանց կողմից հնչած հայտարարությունները մինչ օրս որոշակի, կոնկրետ գործողությունների չեն վերածվել, ինչը այն տպավորությունն է թողնում, որ Ամերիկայի վարչակազմը թեեւ ցանկանում է ամեն գնով կարգավորել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, բայց չի մտահոգվում Արցախի հայ բնակչության ապագայով։

**Անգլ. բնագրից թարգմանեց**
**ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**
**(The Armenian Mirror-Spectator)**

# Չշփվող «կարգինը», ընդդեմ եւ մերձ քոչարյանականները, նախկին լուսավորականն ու «անող» ՔՊ-ականը՝ նույն կտավում



Խայտաբղետ պատկեր է ձեւավորվել Երեւանի ավագանու ընտրություններին։ Քարոզարշավին մասնակցող բոլոր ուժերին մեկ անունով կարելի է «Ելք» դաշինք կոչել։ 13 կուսակցություններն ու մեկ դաշինքը հետեւում են քաղաքապետ դառնալու անսահման ցանկություն ունեցող **Տիգրան Ավինյանի**՝ քաղաքացիներին մեկիկ-մեկիկ բարեւելու շոուին, կամ էլ պարզապես պտտվում են նրա արբանյակի շուրջը՝ ընտրություններից հետո քաղաքային արեւի տակ իրենց տեղը գտնելու համար։ Փոքրիշատե առանձնանում է իշխանության գալու, կարծես թե, լուրջ հայտ ներկայացրած ու Արցախից սկսող **Ռուբեն Վարդանյանի** «Ապրելու երկիրը»՝ ի դեմս նախկին լուսավորական ու պատերազմից հետո նորից Արցախում կարճ ընթացք աշխատած **Մանե Թանդիլյանի**։ Քարոզարշավի մեկնարկից թեեւ մի քանի օր է անցել, բայց ակնհայտ է՝ Վարդանյանը գումար չի խնայում՝ ցանկալի արդյունք գրանցելու համար։ Առավել տարօրինակ ու զարմանալի է **Անդրանիկ Թեւանյան-Զարուհի Փոստանջյան** դուետը, որ ընտրություններին ձեւավորած միակ դաշինքն է։ Եթե մինչեւ ընտրությունները հիմնազուրկ էին թվում խոսակցությունները, թե դաշինքը երկրորդ նախագահ **Ռոբերտ Քոչարյանի** կուրացիայի տակ է, ապա այժմ դա առավել քան հստակ է. դաշինքի՝ քարոզարշավի մասին նյութերը Ռոբերտ Քոչարյանի որդին՝ **Լեւոն Քոչարյանը**, Facebook- ի իր էջում հաճախ է տեղադրում։ Փաստորեն՝ իր գործունեության ամբողջ ընթացքում Քոչարյանին քննադատած Փոստանջյանն այժմ ՀՀ երկրորդ նախագահի դաշինքի մաս է կազմում։

Նախկին քաղաքապետ **Հայկ Մարությանն** էլ, որ անգամ լրագրողների հետ շփումներից վախեր ունի, խոստանում է «Շարունակել», ըստ երույթին՝ ընդհատակում մնալու ու ընտրյալների հետ հաղորդակցվելու ձեռագիրը։

Թե ով ինչպես կհատի ընտրական ռուբիկոնը, պարզ կլինի սեպտեմբերի 17 -ի կեսգիշերին։ Բայց ռուսական ասացվածքով ասած՝ «ոզնուն էլ հասկանալի է», որ պետության համար ծանրագույն այս ժամանակահատվածում երեւանցու դարդն ու ցավն ընտրությունները չեն։

**ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ**

# Ստեփան Պատիկյանի նոր հաջողությունները



2023 թվականի հուլիսի 19-ից հուլիսի 25-ը տեղի է ունեցել Հոնկոնգի գրքի 33-րդ տոնավաճառը HONG KONG BOOK FAIR 2023, որն անցկացվել է Հոնկոնգի կոնվենցիայի եւ ցուցահանդեսային կենտրոնում:

Ցուցահանդեսը ավանդաբար կազմակերպվել է Հոնկոնգի Առեւտրի զարգացման խորհրդի կողմից եւ ամեն տարի ունեցել ավելի քան մեկ միլիոն այցելու:

Ասիական տարածաշրջանի ամենամեծ ցուցահանդեսը ներկայացնում էր վերջին մեկ տարվա ընթացքում հրատարակված կրթական, մեթոդական եւ գիտական հրապարակումները, ինչպես նաեւ հեռավար ցուցահանդեսում ներկայացված հրատարակությունների եւ գյուտերի մասին տեղեկություններով կատալոգներ:

Ցուցահանդեսի էքսպոզիցիան ուղղված էր ցուցահանդեսի այցելուներին, ցուցահանդեսում աշխատող ԶԼՄ-ներին, Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի կրթական հաստատություններին գիտական եւ կրթական գրականության մասին իրազեկելուն:

Հաշվի առնելով անվանի գիտնական, Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահի, բազմաթիվ ակադեմիաների իսկական անդամ, Ռուսաստանի բնագիտության ակադեմիայի պրոֆեսոր, «**Ազգ**»-ի երկարամյա աշխատակից **Ստեփան Պատիկյանի** գիտական աշխատանքների կարեւորությունը գիտության եւ կրթության զարգացման գործում, ցուցահանդեսի նախագահության որոշմամբ նրա գիտական աշխատանքները ներկայացվել են ցուցահանդեսի ծանոթագրված կատալոգում (HONG KONG BOOK FAIR 2023 կատալոգի հատուկ հրատարակությունում):




Հարկ է նշել,որ Ս. Պատիկյանը հեղինակ է շուրջ 300 գիտական աշխատությունների եւ տասնյակ մենագրությունների: Նրա գիտական աշխատանքները դեռեւս Խորհրդային Միության տարիներին ներդրվել են Մոսկվայի էներգահամակարգում եւ բազմաթիվ կազմակերպություններում: Նա համաշխարհային ճանաչման արժանացած վաստակաշատ գիտնական է:

2009թ. գիտամանկավարժական բազմամյա եւ բեղմնավոր գործունեության համար ստացել է Ռուսաստանի բնագիտության ակադեմիայի պրոֆեսորի գիտական կոչում: Հաշվի առնելով նրա հսկայական ծառայությունները էներգետիկայի զարգացման եւ կրթության բնագավառում՝ նրան շնորհվել է Վերնադսկու անվան ոսկե մեդալ (Մոսկվա), իսկ 2010թ՝ «Գիտության եւ կրթության վաստակավոր աշխատող» պատվավոր կոչում (Մոսկվա):

2019 թվականի հուլիսի 17-23-ը Հոնկոնգում (Չինաստան), այնուհետեւ Մոսկվայում, Եվրոպական մի շարք երկրներում (Անգլիա, Գերմանիա, Ավստրիա եւ այլք) տեղի ունեցած գրքի միջազգային հեղինակավոր ցուցահանդեսներում Ս. Պատիկյանի գիտական աշխատանքները մեծ հետաքրքրություն եւ լայն արձագանք են ունեցել:

Նրա գրչին է պատկանում նաեւ Հայաստանի եւ Արցախի էներգետիկայի պատմության քառհատոր գիտական մենագրությունը: 2017թ. Արցախի էներգետիկայի զարգացման գործում ունեցած ծանրակշիռ վաստակի համար պարգեւատրվել է ԱՀ-ի պետական պարգեւով՝ «Երախտագիտություն» մեդալով:

# Սյունիքի ջերմային էլեկտրակայան -120

Սյունիքի գործարանի ջերմային էլեկտրակայանը կառուցվել է 1903 թվականին ֆրանսիական ընկերությունների կողմից՝ գործարանին եւ հանքերին էլեկտրական էներգիա մատակարարելու համար: Կայանում տեղադրվել են «Դիզել» տեսակի երկու շարժիչ՝ յուրաքանչյուրը 147 կՎտ (200 ձիաուժ) հզորությամբ, որոնք աշխատում էին առանձին-առանձին: Շարժիչներից մեկը միացվել է 500 Վ լարման, 125 կՎտ հզորության հաստատուն հոսանքի գեներատորին: Արտադրված էլեկտրական էներգիան օգտագործվել է հանքերի շահագործման նպատակով: Երկրորդ շարժիչը միացվել է 230 Վ լարման, 110 կՎտ հզորության եռաֆազ հոսանքի գեներատորին: Էլեկտրական էներգիան օգտագործվել է գործարանի կարիքների համար: Էլեկտրական էներգիայի տարեկան արտադրությունը կազմել է մինչեւ 500 հազար կՎտժ:



Հարկ է նշել,որ Հայաստանում 20-րդ դարի սկզբին շահագործվում էին 13 փոքր էլեկտրակայաններ՝ 3165 կՎտ գումարային հզորությամբ: 13 կայաններից 9-ը ջրային էին, աշխատում էին ջրի էներգիայի հաշվին, 4-ը՝ջերմային (աշխատում էին ներքին այրման շարժիչներով): Տարեկան արտադրվում էր 5.1 միլիոն կՎտժ էլեկտրական էներգիա:

Համեմատության համար նշեմ, որ 20-րդ դարի սկզբին աշխարհում տարեկան արտադրվել է մոտ 15 միլիարդ կՎտժ էլեկտրական էներգիա: Էլեկտրակայաններ են շահագործվել նաեւ Կարս քաղաքում: Հայաստանում առաջին հիդրոէլեկտրակայանը կառուցվել է 1903 թ., Դիլիջանում: Աղստեւ գետից առբերվող ջրով պտտվող անիվն աշխատեցնում էր փայտասղոցարանի շրջանաձեւ սղոցը:

**ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ**

# Գիտնականները ուսումնասիրում են տիեզերքը

## *Ակտիվ աստղեր եւ խտացումների առաջացում*

ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի գիտաշխատողները միջազգային պրակտիկայում առաջին անգամ ստացել են դիտողական ապացույց ակտիվ աստղերի ժայթքումների եւ արտահոսքերում խտացումների առաջացման միջեւ կապի առկայության մասին:

Ակտիվ աստղերի ժայթքումների եւ արտահոսքերում խտացումների առաջացման միջեւ առկա կապը վաղուց էր ենթադրվում, սակայն առաջին անգամ միջազգային պրակտիկայում այն ստացավ դիտողական ապացույց: Այդպիսի ապացույց է հանդիսացել PV Cep էռուպտիվ աստղի արտահոսքում հայտնաբերված նոր խտացումը, որի կինեմատիկ տարիքը համընկնում է այդ աստղի մոտ դիտված պայծառության շեշտակի աճի ժամանակահատվածի հետ:



Աշխատանքներն ընդգրկում են հետազոտություններ էլեկտրամագ-նիսական ալիքների լայն սանդղակում եւ իրականացվել են աշխարհի խոշորագույն դիտակներով, օգտագործվել են առկա բոլոր աստղագիտական շտեմարանները: Ամենաարժեքավորն այն է, որ խոշորագույն դիտակներով ուսումնասիրվել են օբյեկտներ, որոնք հայտնաբերվել են Բյուրականի աստղադիտարանի 1մ Շմիդտի դասի դիտակով: Այդ դիտակով հայտնաբերվել են ոչ միայն գերձայնային արտահոսքեր երիտասարդ աստղերից, այլ նաեւ աստղառաջացման նոր տիրույթներ:

Հետազոտություններն իրականացվել են «Էքստրեմալ բռնկումային ակտիվությամբ երիտասարդ օբյեկտներ» թեմատիկ ծրագրի շրջանակներում, որի հիմնական նպատակն է աստղերի զարգացման վաղ փուլերում ընթացող անկայուն երեւույթների ֆիզիկական բնույթի բացահայտումը: Ծրագրի ընթացքում Բյուրականի աստղադիտարանի գիտական խումբը համագործակցել է Ռուսաստանի Հատուկ աստղաֆիզիկական աստղադիտարանի, ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի, Հավայան կղզիների համալսարանների եւ այլ գիտական հաստա-տությունների հետ:

Գիտական ուսումնասիրությունները շարունակվում են:

**ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԲ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրված՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 24.08.2023, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: